

Հավելված 1

ՀՀ Արագածոտնի մարզի
Ապարան համայնքի ավագանու 2026 թվականի
հունիսի 24-ի թիվ 153-Ն որոշման

Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

1. Ներածություն

Գլխավոր հատակագծի մշակման հիմնական նպատակը, տարածքային պլանավորման միջոցով, համայնքների համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման ու կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է:

ՀՀ Արագածոտնի մարզի միկրոոթեգիոնալ մակարդակի՝ Արագածոտն-10 համակցված տարածքի ինժեներա-երկրաբանական նախապատրաստումը, տարերային և տեխանծին վտանգավոր երևույթներից պաշտպանությունը (այդ թվում՝ երկրաշարժից), ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների իրականացում կարգավորվում են համապատասխան իրավական ակտերով, համայնքային և մարզային մակարդակներում մշակված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններով և այլ նորմատիվ-իրավական ակտերով, որոնք նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորմանը:

Արտակարգ իրավիճակներում համայնքների տարածքի ռացիոնալ օգտագործման և կենսագործունեության կայունության բարձրացման համար նախագծում նախատեսված է տարբեր ֆունկցիոնալ գոտիների և միջհամայնքային տրանսպորտային ցանցի մանրամասն լուծումներ:

Փողոցների նախագծային լայնությունը, կարմիր գծերում, նախատեսվում է նվազագույնը 3.0 մ, որպեսզի շենքերի և շինությունների փլուզման գոտիներում հնարավոր լինի փրկարարական ստորաբաժանումների առաջխաղացումը:

Ինժեներական հաղորդակցության ուղիների նախագծման հիմքում դրվում է բնակավայրերի կենսագործունեության հուսալի ապահովումը, ինչպես խաղաղ, այնպես էլ արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ:

Անհրաժեշտ է նախատեսել բնակավայրերի կենտրոնացված ազդարարման համակարգի վերականգնում:

2. Ընդհանուր բնութագիրը

Արագածոտն -10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներում ներառված են Ալազյազ, Ավշեն, Կանխաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Զամշլու, Ռյա Թազա, Սադունց, Սիփան և Մելիքայուղ /թվով 12/ բնակավայրերը:

3. Վտանգավոր բնական երևույթներ

Արագածոտն-10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքները բնութագրվում են սեյսմիկ վտանգի բարձր մակարդակով. գտնվում են $\alpha_{\max} = 0.4g$ և $0.5g$ ($0.4g$ -ն մոտավորապես համապատասխանում է 9 բալ, $0.5g$ ՝ 10 բալ ըստ MSK-64 սեյսմիկ ինտենսիվության 12-բալանոց սանդղակի) առավելագույն հորիզոնական արագացումների արժեքներով սեյսմիկ գոտիներում:

Բնակավայրի անվանումը	Սեյսմիկ գոտին	Բնակավայրի անվանումը	Սեյսմիկ գոտին	Բնակավայրի անվանումը	Սեյսմիկ գոտին
Ալազյազ	II	Միջնատուն	III	Ռյա Թազա	II
Ավշեն	III	Միրաք	II	Սադունց	II
Կանխաշիր	II	Շենկանի	II	Սիփան	III
Ճարճակիս	III	Զամշլու	II	Մելիքայուղ	III

Արագածոտնի մարզի Արագածոտն-10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող բնածին վտանգներ

N	Բնակավայրեր	Ոճեղ կարկուտ	Ոճեղ քամի	Հեղեղ	Սելավ	Հորդառատ անձրև	Երաշտ	Կայծակ	Ջրոտախառնություն	Փառևտրի	Սողանք
Արագածոտն-10											
1.	Ալազյազ	V	V	V	V						
2.	Ավշեն	V		V							
3.	Կանխաշիր	V			V						
4.	Ճարճակիս										
5.	Միջնատուն	V									
6.	Միրաք	V	V	V	V						V
7.	Շենկանի	V	V	V							
8.	Զամշլու	V		V							
9.	Ռյա Թազա	V	V	V	V		V				

10.	Սադունց	V	V		V						
11.	Սիփան	V		V							
12.	Մելիքգյուղ	V	V	V	V						V

3. Տեխնաձին վտանգներ

Արագածոտն-10 համակցված տարածքում ընդգրկված համայնքներում տեխնաձին արտակարգ իրավիճակների օջախներ են համարվում կոմունալ-էներգետիկ ցանցը՝ կենցաղային գազատարները, կոյուղու և խմելու ջրագծերը, էներգամատակարարման համակարգերը, ինչպես նաև հրդեհապայթյունավտանգ օբյեկտները:

«Ծիլքար» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում են գտնվում Զամշլու և Ռյա Թազա համայնքները:

Մելիքգյուղ համայնքի տարածքում է գտնվում «Մեգո-Գոլդ» ՍՊԸ-ին պատկանող «Մելիքգյուղ» N1 պոչամբարը, որի նախագծային ծավալը կազմում 0,1 մլն/մ³, իսկ փաստացի ծավալը 0,085 մլն/մ³:

Միրաք բնակավայրում առկա է թվով 1 ԱԳԼՃԿ, Ռյա Թազա բնակավայրում՝ ևս 1 ԱԳԼՃԿ:

Արագածոտն-10 համակցված տարածքում ճառագայթավտանգ և քիմիական վտանգավոր օբյեկտներ չկան:

4. Քաղաքացիական պաշտպանության աշտպանական կառույցներ

Բնակչության պատասպարումն իրականացվում է՝ խոշոր աղետների և ռազմական գործողությունների ժամանակ: Բնակչության պատասպարումն իրականացվում է ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում և պարզագույն թաքստոցներում: Վերջիններս կարող են հանդիսանալ նկուղներ, կիսանկուղներ, գետնանցումներ, հանքախորշեր և այլ:

Արագածոտնի մարզի Արագածոտն-10 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքային պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման համար բնակավայրերի բնակչության պատասպարումն ամբողջական կազմակերպելու, արագ կառուցվող թաքստոցներ կառուցելու, նպատակով անհրաժեշտ է նախատեսել հետևյալ տարածքները՝

- Ալագյազ՝ 310,0մ² մակերեսով՝ թվով 15 թաքստոց,
- Ավշեն՝ 280,0մ² մակերեսով՝ թվով 14 թաքստոց,
- Կանիաշիր՝ 192,0մ² մակերեսով՝ թվով 9 թաքստոց,

- Շենկանի՝ 170,0մ² մակերեսով՝ թվով 8 թաքստոց,
- Զամշլու՝ 165,0մ² մակերեսով՝ թվով 8 թաքստոց,
- Ռյա Թազա՝ 360,0մ² մակերեսով՝ թվով 18 թաքստոց,
- Սիփան՝ 200,0մ² մակերեսով՝ թվով 10 թաքստոց,

Պաշտպանական կառույցների տեղակայման վայրերի վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնի է:

5. Բնակչության պատասպարում

Բնակչության պատասպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող թաքստոցների շինարարության կազմակերպումն (անհրաժեշտ շինանյութերի պահեստավորում և պահանջվող տեխնիկա) ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Խաղաղ ժամանակ, պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով կառույցի ծավալի 40%-ի չափով, ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավելի 6 ժամից, օգտագործման ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից:

Պաշտպանական կառույցները տարբերվում են կառուցման ժամկետներով՝

ա) խաղաղ ժամանակ կառուցվող թաքստոցներ.

բ) պատերազմի սպառնալիքի ժամանակ կառուցվող պաշտպանական կառույցներ՝

- արագ կառուցվող թաքստոցներ,

- պարզագույն թաքստոցներ:

Արագ կառուցվող թաքստոցները կառուցվում են ամենասեղմ ժամկետներում՝ առավելագույնս օգտագործելով առկա հավաքովի կառուցվածքներն ու նյութերը, պարզեցված սարքավորումները:

Արագ կառուցվող պաշտպանական կառույցների տեղակայման վայրը և թիվը որոշվում են քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից՝ ելնելով խաղաղ ժամանակ դրանցով բնակչության փաստացի ապահովվածությունից:

Պարզագույն թաքստոցները կառուցվում են պատերազմի սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղօրոք մշակվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից:

6. Բնակչության ազդարարում և իրազեկում

Բնակավայրերում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում բնակչությանն ազդարարելու մասին որոշումներն ընդունվում են՝

ա) համայնքային նշանակության արտակարգ իրավիճակների դեպքում՝ համայնքի ղեկավարը,

բ) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հարձակման սպառնալիքի կամ հանկարծակի հարձակման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը, ՀՀ պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

Համայնքներում բնակչության պաշտպանության միջոցառումների ընթացքում կապը կազմակերպվում է գերկարճալիք ու կարճալիք, ինչպես նաև բջջային, քաղաքային և ուղիղ հեռախոսակապի միջոցով:

Ազդանշանը տրվում է շչակների միջոցով, 3 րոպե անընդմեջ տևողությամբ: Բնակչության հետագա գործողությունների վրեժբերյալ հաղորդագրությունները տրվում են հեռուստատեսությամբ և ռադիոյով: Անհրաժեշտության դեպքում ազդարարման գործընթացին մասնակցում են նաև ոստիկանության շարժական ուժերը:

Ազդարարումն իրականացնելու համար անհրաժեշտ է Արագածոտն - 10 համակցված տարածքում ընդգրկված համայնքներում նախատեսել նոր շչակներ, կամ գոյություն ունեցող շչակների նորոգման աշխատանքներ:

Համայնքներում անհրաժեշտ պաշտպանական կառույցների մակերեսների և քանակների մասին տեղեկատվությունը ներկայացված են ՔՊ պլաններում:

7. Բնակչության տարահանումը

Տարահանումն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության կամ բնակչության մի մասի, ինչպես նաև նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխման ու տեղաբաշխման միջոցով:

Համայնքում տարահանում կարող է իրականացվել հետևյալ դեպքերում.

1) հեղեղավտանգ, սելավավտանգ, սողանքավտանգ և ձնահյուսավտանգ տարածքներից.

2) ուժեղ երկրաշարժի հետևանքով ավերված, բնակվելու համար վտանգավոր և ոչ պիտանի տարածքներից,

3) բնակավայրերից մասնակի տարահանում կարող է իրականացվել ռազմական դրության ժամանակ հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական

սպառնալիքի, ինչպես նաև մարտական գործողությունների վարման և զենքի տեսակների կիրառման կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում:

4) շենքերում, շինություններում, մարդկանց կուտակման վայրերում հրդեհների կամ պայթուցիկ սարքի տեղադրման մասին ահազանգի ստացման կամ հայտնաբերման դեպքում:

7.1. Բնակչության տարահանման ձևերն ու միջոցները

Բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարասյուներով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյուներով:

Առանձին դեպքերում տարահանման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտային միջոցներ:

Տարահանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցների հատկացումն ու վառելիքաքսութային նյութերով ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Առաջին հերթին տրանսպորտով դուրս են բերվում հղի կանայք, հիվանդները, փոքրահասակ երեխաներ (մինչև 14 տարեկան) ունեցող կանայք, երեխաները և տարեցները, բժշկական հաստատությունները, բնակչության այն մասը, որը չի կարող տեղաշարժվել հետիոտն կարգով: Պլանավորվում է տրանսպորտային միջոցների անբավարարության դեպքում՝ մնացած բնակչությանը դուրս բերել հետիոտն կարգով:

Տարերային, տեխնաձին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում ընդհանուր կամ մասնակի տարահանման մասին որոշում ընդունում են, Հայաստանի Հանրապետության մարզպետները՝ մարզի բնակչության համար, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ համայնքի բնակչության համար և կազմակերպությունների ղեկավարները՝ իրենց աշխատողների համար: Նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձինք: Պատերազմական գործողությունների ժամանակ օգտագործվող զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակության վայրերն

իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:

Տարահանման հանձնաժողովները նախապես որոշում և տարահանման միջոցառումներին մասնակցող կազմակերպություններին տեղեկացնում են տարահանումն իրականացնող մարմինների, տարահանման և ընդունման հավաքակալայանների, կարճաժամկետ տեղակայման կետերի, երկարատև բնակության կետերի գտնվելու վայրի մասին:

Տարահանման հավաքակետերը ծավալվում են դպրոցների տարածքներում:

Տարահանման միջոցառումները կանոնակարգվում են նախապես մշակված տարահանման պլաններով, որոնք ներառում են՝

1) բնակչության տարահանման անցկացման կարգն ու ժամկետները, տարահանման համար տրամադրվող ուժերն ու միջոցները, տարահանման երթուղին.

2) տարահանման և ընդունման հավաքակալայաններում աշխատանքների կազմակերպումը.

3) տարահանման հաշվարկը՝ ըստ տրանսպորտային տեսակների ու տարահանման երթուղիների.

4) ընդունող բնակավայրերում տարահանվողների տեղաբաշխման կազմակերպման և սնունդով ապահովման կանոնակարգը.

5) նյութական և մշակութային արժեքների դուրսբերման կարգը:

Բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանները մշակում են տարահանման համապատասխան հանձնաժողովները՝ լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանման հետ համատեղ:

Տարահանման հավաքակալայաններն ստեղծվում են հանրակրթական և հասարակական կազմակերպությունների տարածքներում, ապահովվում կապի միջոցներով, բուժապասարկման կետով, մոր ու մանկան և հանգստի սենյակներով: Տարահանման երթուղիները ճշգրտվում են տարահանման հավաքակալայաններում:

Բնակչության տարահանումն իրականացվում է տարահանման հավաքակալայաններից, որտեղ տարահանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են տարահանվողները:

8. Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովում

Համայնքների բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի 679 որոշման համաձայն: Սահմանամերձ՝ մինչև 10 կմ շառավղով գոտու համայնքների բնակչությունը առաջին հերթին՝ զտող հակազագերով և համազորային պաշտպանական լրակազմերով միջոցներով:

Բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները կուտակվում են նախապես զորահավաքային պահուստում դրանց

պահեստավորմամբ և կազմակերպություններում համապատասխան պաշարների ստեղծմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին:

Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում անհատական պաշտպանության միջոցների բաշխման կարգը սահմանվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության պլաններով:

. Նշված պլաններով որոշվում են անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերը, ժամանակը, քանակը և հերթականությունն ըստ համայնքների ու կազմակերպությունների:

Անհատական պաշտպանության միջոցների հաշվարկը կատարվում է ըստ տարիքային խմբերի՝ բնակչության քանակ գումարած 10%:

9. Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

Միջոցառումներն իրականացվում են նախապես և ուղղված են արտակարգ իրավիճակների առաջարման ռիսկը նվազագույնի հասցնելուն, իսկ դրա առաջարման պարագայում՝ մարդկանց առողջության պահպանմանը, շրջական բնական միջավայրին պատճառվող վնասի և նյութական կորուստների չափերի նվազեցմանը:

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումները անհրաժեշտ է ընդգրկել մարզի և համայնքների զարգացման ծրագրերում, ինչպես նաև համայնքների աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլաններում:

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների հիմնական պահանջներն են՝

ա) բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում, մանրամասն հատակագծման նախագծերում և գոտևորման նախագծերում վտանգավոր ձեռնարկությունների ու արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխումը՝ բնակչության պաշտպանության տեսանկյունից և դրանց շուրջ սանիտարական գոտիների նախատեսում.

ա) կենսապահովման օբյեկտների անխափան աշխատանքի ապահովումը,

բ) արտակարգ իրավիճակների կանխումն ու հնարավոր հետևանքների նվազեցումը,

գ) հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացումը:

Համակցված տարածքներում ներառված համայնքներում արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսումն ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթների համաձայն (2002 թվականի հունիսի 12-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս և այլն):

10. Հրդեհային անվտանգություն

Բնակավայրերում պետք է կազմակերպվեն հրդեհային պահպանությունը՝ շինարարական և հրդեհային անվտանգության նորմերով նախատեսված ջրավազանների և հիդրանտների առկայությունը, շենքերին շինություններին հարող ավտոճանապարհների անցանելիությունը, կապի և ազդարարման միջոցների առկայությունը:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի՝ պետության պատվիրակած լիազորություններն են՝

1. հրդեհների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,

2. հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցումը:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի կամավոր լիազորություններն են՝

1. հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում՝ կամավորական խմբերի ստեղծում, ուսուցում և գույքով ու հանդերձանքով ապահովում,

2. հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը,

3. հրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

Քաղաքաշինության բնագավառում հրդեհային անվտանգության կանոնները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով և շինարարական նորմերով և կանոններով, որոնց կիրառումը նախատեսված է դեռ բնակավայրի նախագծման փուլում:

Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերն ու նորմատիվային փաստաթղթերը

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
2. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
3. «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք,
4. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք,
5. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենք,
6. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
7. ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N194-Ն որոշում:
8. ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13 «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 746 որոշում,
9. ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» թիվ 592 որոշում,
10. ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» թիվ 679 որոշում,
11. ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 702 որոշում:
12. Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման

- կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն» իրավական ակտ,
13. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» թիվ 2328-Ն որոշում:
14. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, տեխնաժին արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍ 201-2000,
15. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, բնական արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍ 227-2003,
16. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍ 233-2004,
17. ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում»
18. ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»
19. ՀՀՇՆ II-6.01-96 «Վտանգավոր բնական ազդեցությունների երկրաֆիզիկա»,
20. ՍՆԻՊ 2.01.15-90 «Տարածքների, շենքերի և կառուցվածքների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից. Նախագծման հիմնական դրույթներ»,
21. ՍՆԻՊ 2.06.15-85 «Տարածքների ինժեներական պաշտպանությունը ողողումներից և հեղեղներից»,
22. ՇՆՁ II-6.01.01-98 «Շենքերի և կառուցվածքների տարածքների ինժեներական պաշտպանությունը բնության վտանգավոր երևույթներից»,
23. ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մշակումները կատարվել են պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր NՀՀՔԿ-ԳՀԱԾՁԲ-19/37-2 շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի /Պատվիրատու/ կողմից տրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Նախագծերի մշակման համար Պատվիրատուի կողմից որպես ելակետային նյութեր և տվյալներ կատարողին տրամադրված է. տարածքի Մ1:10000 մասշտաբի թվայնացված տեղագրական հանույթները, համայնքների տարածքի կադաստրային քարտեզները, հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվեկշիռները «Ձև 22», իսկ համայնքների զարգացման ծրագրերը ՀՀ Արագածոտնի մարզի կայքէջերից: Աշխատանքի կատարման համար

անհրաժեշտ ստույգ տեղեկատվություն ունենալու համար փորձ է արվել դիմել մարզպետարանի ծառայությունների և համայնքապետարանների օգնությանը:

Թվարկված ելակետային նյութերից՝ տեղագրական հանույթը թվայնացվել է 2005 թվականին՝ անցյալ դարի 80-ական թվականներին արդիականացված տեղագրական թղթային նյութի հիման վրա և ներկա պահին հնացած է, համայնքների կադաստրային քարտեզները մեծաքանակ անճշտություններ են պարունակում, իսկ «Համայնքների զարգացման ծրագրերը» տարաբնույթ են, կազմով ու բովանդակությամբ միասնական ձևաչափ չունեն:

Վերը նշված թերությունները պարունակող ելակետային նյութերը բացասաբար են ազդում տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծային աշխատանքների կազմակերպման և մշակումների որակի վրա, որի համար կատարողը պատասխանատվություն կրել չի կարող:

Տեխնիկական բնութագրին համապատասխան նախագծի մշակման հիմնական նպատակն է՝ ներառված համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Տարածքային հատակագծման մասով նախագիծը պետք է առաջարկի տարածքների հատակագծային կազմակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությանը, ներդրումների համար նպաստավոր ոլորտների և գոտիների, արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը, ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը, ինժեներատրանսպորտային և կոմունալ-կենցաղային ենթակառուցվածքների կատարելագործմանը, պատմամշակութային ժառանգության պահպանությանը, տարածքի ինժեներական նախապատրաստմանը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը, սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման (այսուհետ՝ «Արագածոտն-2» ՄՄՀՏՊՓ) նախագիծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության /ՌԷԳ/ մշակման համար հիմք է հանդիսացել 2014թ.-ի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (Այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը: Ըստ Օրենքի 16-րդ հոդվածի հիմնադրությամբ փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է հիմնադրությամբ փաստաթղթի գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա տրամադրվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՌԷԳ հաշվետվության մշակման համար:

Ներկայացվող ՌԷԳ հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Ներկայացվող ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՌԷԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ կազմվել է «Շրջակա

միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 14 հունվարի 2021 թ. տրամադրված ՏԱ 05 Տեխնիկական առաջադրանքի հիման վրա: Այն «Արագածոտն-10» ՄՄՀՏՊՓ նախագծերի մաս է կազմում որպես Հավելված 3:

1.0 ԾՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՅՈՒՆԵՐ **Քաղաքական, օրենսդրական եվ վարչական շրջանակները**

Սույն գլուխը ներկայացնում է առնչվող «Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

1.1 ՀՀ ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277- Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

“Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծին առնչվող հողատարածքների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն հողային օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերեսային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծին առնչվող ջրային ռեսուրսների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն ջրային օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի իրականացման շրջանակներում ընդերքօգտագործման հողերի հետ հարաբերությունները կարգավորվում են համաձայն ընդերքի մասին օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու

պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջև, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի գործառնությունները իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշխատանքային օրենսգրքի պահանջներով:

**“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին”
Հայաստանի Հանրապետության օրենք (2014թ.)**

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի: Վերը նշված օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, “Բ” և “Գ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունը իրանացվում է երկու փուլով: Առաջին փուլում ներկայացվում է գործունեությունը նկարագրող հակիրճ բացատրագիր (նախնական գնահատման հայտ), կազմակերպվում են առաջին հանրային քննարկումները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնապահպանության նախարարություն: 30 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կազմում գործող փորձաքննական կենտրոնը ուսումնասիրում է հայտը և կազմակերպում երկրորդ հանրային քննարկումները, որից հետո տրամադրում է տեխնիկական առաջադրանք “Ա” և “Բ” կատեգորիաների համար, իսկ “Գ” կատեգորիայի դեպքում՝ փորձաքննական եզրակացություն:

Երկրորդ փուլում ձեռնարկողը կազմակերպում է երրորդ հանրային լսումները, որտեղ ներկայացնում է գործունեությունը նկարագրող փաստաթուղթը (ծրագիր, նախագիծ) և ԾՄՄԱԳ հաշվետվությունը, որոնք, լսումների նյութերի հետ մեկտեղ ներկայացվում են փորձաքննական կենտրոն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննության հիմնական փուլը տևում է 60 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են չորրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Հստ օրենքի հիմնադրության փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացն իրականացվում է 2 փուլով 4 հանրային քննարկումների իրականացմամբ: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք /12.12.1992թ./

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ անձնակազմի սանիտարահամաճարակային անվտանգության խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի:

“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք /04.03.1996թ./

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ աշխատողների և մերձակա բնակչության առողջության ապահովման խնդիրները կարգավորվում են սույն օրենքով:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք/11.11.1998թ./

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների հետ կապված բոլոր խնդիրները պետք է կարգավորվեն քստ այս օրենքի և ՀԲ պահանջների:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք (23.11.1999 թ.)

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի տարածքներում բնական բուսականության պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք(03.04.2000թ.)

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի տարածքներում վայրի կենդանիների պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջանակներում շինարարական և կենցաղային թափոնների կառավարումը պետք է իրականացվի ըստ սույն օրենքի պահանջների:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ բնապահպանական օրենսդրության կատարումը վերահսկվելու է բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի կողմից համաձայն սույն օրենքի դրույթների:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող Էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքի դրույթներով:

«ՀՀ բույսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014 թ. N 781-Ն որոշումը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2–III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակի և ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը սահմանում են հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները՝ հողի սանիտարական վիճակի հիգիենիկ գնահատականը, հողի որակի հսկողությունը, հողի սանիտարական վիճակի գնահատման հիմնական ցուցանիշները՝ կախված դրանց ֆունկցիոնալ նշանակությունից, հողի աղտոտվածության աստիճանից կախված հողի օգտագործման առաջարկները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

ՀՀ կառավարության 10.12.2015 թ. N 54-13 արձանագրային որոշում «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները» հաստատելու մասին:

Սույն փաստաթղթի հիմքում դրված է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ մշակված ՀՀ էներգետիկ համակարգի նվազագույն ծախսերով զարգացման ծրագիրը: Այդ ծրագիրը 2014 և 2015 թվականներին լայն քննարկման առարկա է դարձել ՀՀ կառավարությունում և Հանրային Խորհրդում, շահագրգիռ գերատեսչությունների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ:

ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր / մինչև 2040թ.

Ռազմավարական ծրագիրն ընկած է էներգետիկայի բնագավառին առնչվող բոլոր որոշումների կայացման, հարևան երկրների հետ էներգետիկայի ոլորտին առնչվող հարաբերությունների կառուցման, ավելի զրոքալ էներգետիկ շուկաներին ինտեգրման և հիմնական գործընկերների հետ հարաբերությունների հետագա զարգացման հիմքում:

ՀՀ կառավարությունն էներգետիկայի բնագավառում իրականացնելու է սոցիալական, բնապահպանական և տնտեսական հավասարակշռված քաղաքականություն, առավելագույնս ներգրավելով բնակչությանն ու գործարարներին սույն ռազմավարության նպատակներին հասնելու համար:

Սույն ռազմավարությունը հիմք է հանդիսանալու էներգետիկայի բնագավառի ազգային ծրագիր-ժամանակացույցի մշակման համար, որում մինչև 2040թ. ժամանակահատվածի համար սահմանված կլիմեն սույն ռազմավարության իրագործումն ապահովող առանձին թիրախային ցուցանիշներ և գործողությունների ցանկ: Էներգետիկայի բնագավառի ազգային ծրագիր-ժամանակացույցը կհաստատվի մինչև 2020թ. ավարտը:

“Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը” (հաստատվել ՀՀ նախագահի կողմից 23.10.2013թ.)

Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) նպատակառոտված է ապահովելու Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին համահունչ:

Էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում է պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ: Այս փաստաթուղթը նաև նպատակ ունի երաշխավորել, որ ՀՀ ներգրավվելու է միջազգային կազմակերպությունների, Եվրամիության, Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ կողմից կազմակերպվող տարածաշրջանային ծրագրերին և ընդգծում է էներգետիկ ռեսուրսների և վառելիքի երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի կարևորությունը:

1.2. Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն վերը թվարկված նորմատիվային ակտերի, մշակվել են բնապահպանական ուղղվածության բազմաթիվ ռազմավարական, հայեցակարգային և ազգային ծրագրեր, ինչպես նաև ՀՀ կողմից ստորագրվել և վավերացվել են մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ:

Ստորև բերված են ՀՀ կողմից ստորագրված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները և դրանց կարգավիճակը ՀՀ-ում:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օգնի մասին արձանագրություն, (Göteborg, 1999)		1999		
ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2010	2010	2011	
ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999

ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրինակ 1998թ.)	2001	1998	2001	
---	------	------	------	--

Համաշխարհային Բանկի անվտանգության քաղաքականությունները

Համաշխարհային Բանկի OP/BP 4.01՝ “Բնապահպանական Գնահատում” փաստաթուղթը համարվում է ՀԲ բնապահպանական անվտանգության քաղաքականությունների հովանի: Այդ քաղաքականությունները կարևոր են ապահովելու համար հնարավոր բացասական բնապահպանական և սոցիալական հետևանքների բացահայտումը, նվազեցումը և պատշաճ մեղմումը: Անվտանգության քաղաքականությունները, յուրաքանչյուր քաղաքականության կիրառելիությունը, ինչպես նաև դրանց կարգավիճակը առաջարկվող ծրագրի համար՝ ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

ՀԲ անվտանգության քաղաքականություններ

Գործառնական քաղաքականություն	Կիրառելի է եթե՝	Կարգավիճակ
Բնապահպանական Գնահատում (OP 4.01)	Եթե ծրագիրը կարող է առաջացնել (բացասական) բնապահպանական ռիսկեր և ազդեցություններ իր ազդեցության ոլորտում:	Այո
Անտառներ (OP 4.36)	Անտառային ոլորտի գործունեությունը և Բանկի կողմից ֆինանսավորվող այլ միջամտությունները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ անտառածածկ տարածքների վրա:	Ոչ
Հարկադիր վերաբնակեցում (OP 4.12)	Ֆիզիկական վերաբնակեցում և հողի կորուստ, որի արդյունքում տեղի է ունեցել. (i) վերաբնակեցում և կացարանի կորուստ, (ii) ակտիվների կամ ակտիվների հասանելիության կորուստ, (iii) հողի օտարում, եկամուտների աղբյուրների կորուստ կամ ապրուստի միջոցների կորուստ, անկախ այն հանգամանքից, տեղափոխվելու են արդյոք տուժած անձինք այլ վայր, թե ոչ:	Ոչ
Բնիկ ժողովուրդներ (OP 4.10)	Եթե ծրագրի տարածքում կան բնիկ ժողովուրդներ, և ակնկալվում է հնարավոր բացասական ազդեցություն բնիկների վրա, և բնիկները նախատեսվող շահառուների թվում են:	Ոչ

Պատվարների անվտանգություն (OP 4.37)	Եթե ծրագիրը ներառում է մեծ պատվարի (15մ կամ ավելի) կամ բարձր վտանգավորություն ունեցող պատվարի կառուցում: Եթե ծրագիրը կախված է գոյություն ունեցող պատվարից, կամ շինարարության փուլում գտնվող պատվարից:	Ոչ
Թունաքիմիկատների կառավարում (OP 4.09)	Եթե նախատեսվում է թունաքիմիկատների ձեռքբերում: Եթե ծրագիրը կարող է այնպիսի ազդեցություն ունենալ թունաքիմիկատների օգտագործման վրա, որ կարող է վնաս պատճառվել, նույնիսկ այն դեպքում, երբ ծրագիրը չի նախատեսում թունաքիմիկատների ձեռքբերում: Դա ներառում է այն ծրագրերը, որոնք կարող են (i) հանգեցնել թունաքիմիկատների օգտագործման էական աճին՝ առողջության և շրջակա միջավայրի համար բխող ռիսկերով, (ii) պահպանել կամ ընդլայնել թունաքիմիկատների կառավարման ներկայիս ոչ կայուն պրակտիկան, որը հիմնված չէ Թունաքիմիկատների ինտեգրված կառավարման (IPM) մոտեցման վրա, և էական ռիսկ է ներկայացնում առողջության և շրջակա միջավայրի համար:	Ոչ
Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ (OP 4.11)	Քաղաքականությունը գործարկվում է այն ծրագրերի կողմից, որոնք մշակութային արժեքների վնասման առերևույթ (prima facie) ռիսկ են ներկայացնում (օրինակ՝ ցանկացած ծրագիր, որը ներառում է լայնածավալ հողային աշխատանքներ, հողային զանգվածների տեղափոխում, մակերևույթի բնապահպանական փոփոխություններ կամ ոչնչացում):	Ոչ
Բնական միջավայր (բնակավայր) (OP 4.04)	Քաղաքականությունը գործարկվում է ցանկացած ծրագրի կողմից, որը հնարավոր է, որ առաջացնի բնական միջավայրի զգալի փոփոխություն (կորուստ) կամ դեգրադացիա՝ ուղղակիորեն (շինարարության միջոցով) կամ անուղղակի (ծրագրի կողմից պարտադրվող մարդկային գործունեության միջոցով):	Ոչ
Ծրագրեր վիճարկվող տարածքներում (OP 7.60)	Քաղաքականությունը գործարկվում է այն դեպքում, երբ առաջարկվող ծրագիրը իրականացվելու է «վիճարկելի տարածքում»:	Ոչ
Միջազգային ջրային ուղիների ծրագրեր (OP 7.50)	Եթե ծրագիրը վերաբերում է այնպիսի միջազգային ջրային ուղիներին, ինչպիսիք են. ցանկացած գետ, ջրանցք, կամ համանման ջրային մարմին, որը ձևավորում է սահման երկու կամ ավելի պետությունների միջև, կամ ցանկացած գետ կամ մակերեսային ջրային մարմին, որը հոսում է երկու կամ ավելի պետությունների տարածքով (կամ ցանկացած վտակ կամ մակերեսային ջրային այլ մարմին, որը հանդիսանում է այդ ջրային ուղու բաղադրիչը), ցանկացած ծովախորշ, ծովածոց, նեղուց կամ ջրանցք, որը սահմանակից է երկու կամ ավելի պետությունների,	Ոչ

	կամ, գտնվում է մեկ պետության տարածքում, և ճանաչվել է որպես բաց ծովի և նման ջրերի մեջ հոսող ցանկացած գետի ու այլ պետությունների միջև անհրաժեշտ հաղորդակցության խողովակ:	
--	--	--

Թափոնների կառավարման ուղեցույցի մասով

<<Արագածոտն-10» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջանակներում անհրաժեշտ է առաջնորդվել թափոնների կառավարում-ԵՀԳԳ Արևելք, 2010թ.-ի հոկտեմբերին <<Աղբավայրերի շահագործման ուղեցույց>>-ից, որն իրականացվել է Եվրոմիության ֆինանսավորման կողմից:

<<Թափոնների կառավարում-ԵՀԳԳ Արևելք>> ծրագիրը ներառում է մի շարք գործողություններ, որոնք թափոնների կառավարման բնագավառում ուղղված են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ազգային մակարդակով առաջնահերթ խնդիրների լուծմանը: Վերջին նպատակն իրականացվում է ծրագրի շրջանակներում ընտրված պիլոտային շրջանում թափոնների տեղադրման վայրերի գույքագրման (գրանցամատյանի ստեղծման) և թափոնների կառավարման 15 տարվա համապարփակ ռազմավարության մշակման միջոցով: Ռազմավարությունը հիմք կհանդիսանա թափոնների արդյունավետ կառավարմանն ուղղված ներդրումային ծրագրի մշակման համար: Այսպիսով, նախատեսվում է, որ թափոնների կառավարման ռազմավարությունը հանդես կգա որպես մոդել, որը կարող է հետագայում ադապտացվել և կիրառվել նաև երկրի այլ շրջաններում (մարզերում): Աղբավայրում թափոնների պատշաճ տեղադրումը թափոնների կառավարման ժամանակակից և շրջակա միջավայրի համար անվտանգ ցանկացած համակարգի կարևոր և անբաժանելի մասն է, որն, ամենայն հավանականությամբ, կլինի նաև Հայաստանում ընտրված պիլոտային շրջանի համար մշակվող թափոնների կառավարման ռազմավարության բաղադրիչը: Չնայած երկրում թափոնների վերամշակման խրախուսման փորձերին, Հայաստանում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի երկրների մեծ մասում, տեսանելի ապագայում թափոնների տեղադրումն աղբավայրերում կշարունակի մնալ որպես թափոնների կառավարման առավել նախընտրելի (գերակշռող) տարբերակ: Երկրի աղբավայրերի մեծ մասը (գործնականում բոլորը) թափոնների կուտակման վայրեր են, որտեղ բացակայում են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումները: Սակայն անպատշաճորեն կառավարվող թափոնների տեղադրումը կարող է կարճաժամկետ և երկարաժամկետ բնապահպանական և առողջապահական լուրջ բացասական ազդեցություն ունենալ: Ուստի, կարևոր է, որպեսզի աղբավայրերը նախագծվեն, տեղակայվեն, շահագործվեն և վերահսկվեն այնպես, որ բացառվի դրանց կողմից բնապահպանական և առողջապահական անընդունելի ռիսկերի առաջացման հնարավորությունը: Անպատշաճ շահագործման դեպքում նույնիսկ լավագույն ձևով նախագծված և կառուցված աղբավայրը կարող է բնապահպանական լուրջ խնդիրներ հարուցել: Հետևաբար, աղբավայրի խելամիտ շահագործումը կարող է փոխհատուցել դրա տեղակայման և նախագծման թերությունները: Այդ հանգամանքից ելնելով, ՀՀ բնապահպանության նախարարությունը դիմեց <<Թափոնների կառավարում-ԵՀԳԳ Արևելք>> ծրագրին աղբավայրերի շահագործման ուղեցույցի մշակման խնդրանքով, որը պիլոտային շրջանում (ՀՀ Լոռու մարզ), մինչև այն պահը, երբ հնարավոր կլինի

կառուցել շրջանը սպասարկող նոր սանիտարական աղբավայրեր, կարող է դառնալ թափոնների տեղադրման առկա վայրերի շահագործման կատարելագործման գործիք 1: Սույն փաստաթղթի նպատակն է նպաստել թափոնների տեղադրման վայրերի շահագործման գործող ընթացակարգի բարելավմանը, այն համապատասխանեցնելով միջազգային լավագույն գործընթացներին, ինչպես նաև այնտեղ, որտեղ դա գործնականում հնարավոր է, այն զուգամիտել Եվրոպական հանձնաժողովի որոշումների շրջանակներում ընդունված բազմաթիվ ընթացակարգերի և սկզբունքների հետ (օրինակ, <<Թափոնների մասին շրջանակային դիրեկտիվը>> (2008/98/EC), <<Աղբավայրերում թափոնների տեղադրման մասին դիրեկտիվը>> (99/31/EC) և <<Աղբավայրերում թափոնների ընդունման չափանիշների և ընթացակարգերի մասին>> Խորհրդի որոշումը (2003/33/EC): Ուղեցույցը չի լուսաբանում աղբավայրերի կամ թափոնների տեղադրման վայրերի նախագծման կամ կառուցման խնդիրները 2: Սակայն այն կարելի է կիրառել, անկախ դիտարկվող աղբավայրի յուրահատուկ կառուցվածքից կամ տիպից: Այսպիսով, ուղեցույցը կոչված է աղբավայրերի ամենօրյա արդյունավետ շահագործման պահանջների սահմանման միջոցով նպաստել թափոնների տեղադրման ազգային ստանդարտների կատարելագործմանը և հասցեագրում է թափոնների տեղադրման, ծածկման, աղբավայրի բջիջների կառուցվածքի, վայրի տնօրինման և թորանների ու գազերի կառավարման հետ կապված խնդիրները: Հարկ է նշել, որ սույն ուղեցույցում բերված առաջարկությունները կարող են ընդունվել և կիրարկվել միայն հաշվի առնելով Հայաստանում գործող համապատասխան նորմերի և ստանդարտների պահանջները: Սույն հաշվետվության երրորդ գլխում ներկայացված է երկրում թափոնների տեղադրման բնագավառում առկա իրավիճակի համառոտ նկարագրությունն, ինչի նպատակն է առկա համատեքստում փորձել ներկայացնել շահագործման առաջարկվող լավագույն պրակտիկան:

1. Ուղեցույցը կարող է օգտագործվել Հայաստանի այլ շրջաններում (մարզերում) նույնպես, որտեղ բացակայում են ժամանակակից սանիտարական աղբավայրեր:

2. Աղբավայրերի նախագծման վերաբերյալ առաջարկությունները լրացված են ՀՀ քաղաքաշինության նախարարության 29.12.2009թ. թիվ 321-Ա հրամանով հաստատված Աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկում (տես գլուխ 3-ը):

Սույն ՌԷԳ փաստաթղթում վերլուծվում են նախատեսվող ծրագրի իրականացման հետ առնչվող հնարավոր բացասական և դրական սոցիալական ու բնապահպանական ազդեցությունները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ <<Արագածոտն-10>> միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծը, ըստ էության չի հակասում տվյալ տարածքի համար հաստատված վերը նշված առնչվող հիմնադրությային փաստաթղթերի նպատակին, կապին և (կամ) համապատասխանությանը: Այն գալիս է լուծելու տարածաշրջանային առաջնահերթ խնդիրները, դառնալով մեկ ընդհանուր շաղկապված համակարգ:

Նախադրյալներ ստեղծելով Հայաստանի Հանրապետության 2015թ. ստանձնած միջազգային պարտավորությունը, համաձայն որի մինչև 2050թ. Երկրի անտառպատվածությունը ներկայիս 11.2% փոխարեն պետք է հասցվի օպտիմալ 20.1%-ի (ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 4 արձանագրային որոշում), կյանքի կոչելու համար:

1.3 Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման մասով

1. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ
2. ՀՀԾՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն, և փաստաթղթերի մշակման նպատակային ծրագիր, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանկաան խնդիրների համալիրի իրականացմամբ:

Մշակվող միկրոռեգիոնալ մակարդակի նախագիծն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որի հիմնական նպատակը տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ: Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական

գործընթացի առավել ակտիվ մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Հետևաբար, արդի՝ նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով տարածաշրջանի կայուն զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:

2.0 «ԱՐԱԳԱԾՈՏՆ-10» ՄՄՀՏՊ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ, /ԱՅՏ ԹՎՈՒՄ ԶՐՈՑԱԿԱՆ/ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ներկայացված է «ԱՐԱԳԱԾՈՏՆ-10» տարածքային զարգացման հատակագծային կազմակերպում բաժնում, զարգացման ուղվածության ընտրությունը առաջարկված է հիմնվելով և հաշվի առնելով տարածքների բնական պայմանները և երկարաժամկետ զարգացման ընթացքում ձևավորված ենթակառուցվածքը: Դրանք են բաժնի կազմում գետեղված ենթաբաժինները՝ տարաբնակեցման համակարգը, քաղաքային և գյուղական բնակավայրերը, բնակարանային ֆոնդը և բնակարանային ապահովվածությունը, բնակչության հասարակական սպասարկման համակարգը, ճանապարհային ցանցը, էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը և այլն: Այս առումով, այսպես կոչված «գրոյական տարբերակի» դիտարկումը տվյալ մշակումների շրջանակներում որևէ տրամաբանական կամ կառուցողական իմաստ չի պարունակում, քանի որ ամբողջ համակարգերի հեռանկարային զարգացումը մնում է «սառեցված» վիճակում:

«Զրոյական տարբերակ» նշանակում է, որ միկրոռեգիոնալ տարածքում բնակավայրերի տարածքային զարգացում, բնակչության թվի, բնակարանային ֆոնդի, բնակչության հասարակական սպասարկման համակարգի, ինժեներական ենթակառուցվածքների աճը և զարգացումը բացառվում է: Այստեղից հետևում է, որ մշակվող հիմնադրության փաստաթուղթում ամրագրվում են ելակետային հարաչափերը առանց զարգացման հեռանկարների, փաստորեն ներկայացվող հատակագծային զարգացում չի նախատեսվում, բնակավայրի զարգացման ծրագրեր չեն առաջարկվում և բնակավայրի հետագա կենսագործունեությունը շարունակվում է նույն ընթացքով:

Զրոյական տարբերակի բնութագրերը՝ բնակավայրի շրջակա միջավայրի բնական բաղադրիչների բնութագրերը, բնակչության սոցիալական պայմանները մանրամասնորեն ներկայացված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում կամ 13.0 աղյուսակի 3-րդ սյունակում: Զրոյական տարբերակի դեպքում բնական միջավայրի իրավիճակը և բնակչության սոցիալական պայմանները կմնան անփոփոխ:

Քննարկվող տարբերակներ

Բնակավայրի սոցիալտնտեսական զարգացման ծրագրերի քննարկման ժամանակ դիտարկվել են երկու հիմնական տարբերակ.

-բնակավայրի զարգացումը կընթանա հիմնականում գյուղատնտեսական գործունեության ինտենսիվացման ուղիով,

- բնակավայրի զարգացումը կլինի բազմակողմ:

Առաջին տարբերակի դրական կողմն այն է, որ չեն իրականացվի այնպիսի շինարարական կամ ենթակառուցվածքային աշխատանքներ, որոնք բացասաբար կազդեն բնակավայրի բնական միջավայրի վրա:

Սակայն այս դեպքում բնակավայրի կենսական պայմանների բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար չեն լինի անհրաժեշտ խթաններ:

Երկրորդ տարբերակը նախատեսում է բնակավայրի ինտենսիվ զարգացում, այդ թվում ինչպես գյուղատնտեսական ոլորտներում, այնպես էլ տուրիզմի, առողջարարական և այլ:

Այս տարբերակը կարող է ապահովել իրական և զգալի սոցիալ-տնտեսական արդյունքներ: Միննույն ժամանակ տարբերակը կապված է ավելի բարձր բնապահպանական ռիսկերի հետ, որոնցից հիմնականները.

- շինարարական աշխատանքներ, որոնք կարող են բացասաբար ազդել շրջակա միջավայրի, բուսական և կենդանական աշխարհի վրա,

- ակտիվ զբոսաշրջության պայմաններում կարող են վտանգվել տեղանքի բնական էկոհամակարգերը:

Սակայն, եթե մշակվեն և լիարժեքորեն իրականացվեն անհրաժեշտ բնապահպանական, քաղաքաշինարարական և անվտանգության ապահովման միջոցառումներ, այդ ռիսկերը կլինեն նվազագույն և կառավարելի:

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները, ընտրվել է երկրորդ տարբերակը:

3.0 ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտատրծումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը և դրանց իրականացման գործընթացը:

Առկա վիճակի վերլուծություն

«Արագածոտն-10» միկրոռեզիդենցիայի ընդգրկող տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի հյուսիս-արևելյան մասում հարակից է հարավ-արևմուտքից Արագածի լանջերին, իսկ հյուսիս-արևելքից Փամբակի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին: Տարածքը կազմում է 26.306հազ. հա:

«Արագածոտն-10» 16306.2հա տարածքը ըստ հողերի նպատակային նշանակության բաշխվածությունը ունի հետևյալ պատկերը, այդ թվում՝

«Արագածոտն-10» կազմում ներառված է երկու համայնք՝ Ալագյազ միավորված համայնք, որը ներառում է 11 բնակավայր և Մելիքցյուղ համայնքը:

«Արագածոտն-10» բնակչության թիվը ըստ բնակավայրերի բաշխվում է հետևյալ կերպ՝

Բնակավայրերի անվանում	հազ.մարդ
գյուղ Ալագյազ	0.770
գյուղ Ավշեն	0.435
գյուղ Կանիաշիր	0.498
գյուղ Ճարճակիս	0.697
գյուղ Միջնատուն	0.273
գյուղ Միրաք	0.133
գյուղ Շենկանի	0.318
գյուղ Զամշու	0.319
գյուղ Ռիա Թագա	0.740
գյուղ Սաղունց	0.353
գյուղ Սիփան	0.350
Ընդամենը Ալագյազ համայնք	4.886
գյուղ Մելիքցյուղ	1.196
Ընդամենը «Արագածոտն-10»	6.082

«ԱՐԱԳԱԾՈՏՆ-10»-ի ՀՈՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ԸՍՏ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ (հա, առ 12/07/2019թ.
ըստ Հողերի առկայության և բաշխման հաշվետվության. Ձև 22)

Աղյուսակ «Ա-10»

	Համայնքների անվանում			«ԱՐԱԳԱԾՈՏՆ-10»
	Նպատակային նշանակության հողեր	Նպատակային հողեր	Մելիքցյուղ	
	2	3	4	5
	Գյուղատնտեսական	10937.08	2337.72	13274.8
	Բնակավայրերի	567.07	153.15	720.22
	Արդյունաբերության	59.65	263.49	323.14

	<i>Էներգետիկայի</i>	37.72	3.88	41.6
	<i>Հատուկ պահպանվող</i>	90.19	2.98	93.17
	<i>Հատուկ նշանակության</i>	693.35	-	693.35
	<i>Անտառային</i>	856.44	162.4	1018.84
	Ջրային	100.23	68.9	169.13
	Ամբողջը	13340.68	2965.52	16306.2

2.1 Ալագյազ խոշորացված համայնք

Ալագյազ խոշորացված համայնքն ընդգրկում է Ալագյազ, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշու, Ռյա Թագա, Սադունց, Միփան բնակավայրերը:

2.1.1 Ալագյազ բնակավայր

Համայնքը գտնվում է Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանում, Ապարան-Սպիտակ Մ-3 միջպետական ավտոմայրուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 44 կմ հեռավորության վրա: Նախկինում կոչվել է Ալագյոզ, Ջամբշի, Ջամշու Մեծ: Վերանվանվել է Ալագյազ 1938թ-ից: Նախկինում 1972թ-ից՝ մտել է Արագածի շրջանի մեջ:

Համայնքը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակարդակից 2150 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18°C սահմաններում, հունվարյանը՝ -18,-24°C-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Ցուրտ կլիմայի պայմաններում թույլ է զարգացած պտղաբուծությունը: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը անասնաբուծությունն է, որի համար կան նպաստավոր պայմաններ՝ հարուստ ալպիական մարգագետիններ: Բնակիչները զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնապահությամբ, երկրագործությամբ: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաներ: Համայնքի գլխավոր հիմնախնդիրը գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումն է, գյուղատնտեսական բերքի իրացումը: Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է:

Ալազյազ գյուղի բնակչության թիվը կազմում է 770 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Ալազյազի բնակչության թիվը, մարդ, ա.թ.	770
0-5 տարեկան	39
6-14 տարեկան	115
15-18 տարեկան	42
19-62 տարեկան	495
63 և ավելի տարեկան	79
Տղամարդիկ	361
Կանայք	409
Տնային տնտեսությունների թիվը	151

Ալազյազ գյուղում առկա բնակարանային ֆոնդը կազմում է 25.7հազ.ք.մ: Այդ թվում մեկ բազմաբնկարան շենքի ընդհանուր մակերեսը՝ 240քառ.մ և 132 անհատական մենատների ընդհանուր մակերեսը՝ 25,46 հազ. քառ.մ:

Ալազյազ գյուղում մանկապարտեզ հաճախողներ չկան: Գործում է դպրոց, որտեղ տարրական դասարանների հաճախում է 41 աշակերտ, հանրակրթական 99 աշակերտ: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն հաճախում են 3 աշակերտ: Երաժշտական, արվեստի, մարզական դպրոցներ հաճախողներ չկան: Մշակույթի կամ առողջապահական հաստատություններ չկան:

Գյուղում արդյունաբերական կազմակերպությունները բացակայում են:

Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ:

Զբաղվում են նաև խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը՝ 506-ն է, մանր եղջերավոր անասուններինը՝ 626 գլուխ:

Ռոտգումըր կատարվում է մասամբ, կենցաղային ջրամատակարարումը ստորերկրյա աղբյուրներից մշտական:

Էլեկտրամատակարարման ցանցում տեղադրված է 100 կՎա մեկ տ/է:

Գազամատակարարումը ընդգրկում է գյուղի 28%:

Համայնքի տարածքով անցնող միջպետական նշանակության՝ Մ-3 ավտոմայրուղու հատվածի երկարությունը 0,5կմ է, հանրապետականի՝ 2,0կմ: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը Ալազյազ գյուղի մասով՝ 4,6կմ-է:

Գերեզմանոցի տարածքը 7,2 հա- է: Գլխավոր հատակագիծ առկա է:

Ալազյազ գյուղում սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, մայթերի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 49 հազ քառ.մ: Գյուղը աղբավայր չունի: Ալազյազ համայնքի հողային ֆոնդի առկայությունն ու բաշխումը տրված է Աղյուսակ 1.3.0-1-ում:



Նկ. Պատկեր Ալազյազի տարածքից

3.1.2 Ավշեն բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Ալազյազ խոշորացված համայնքի կազմում: Ավշեն ավանվել է 1978 թ-ին: Գյուղը տեղադրված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջերին: Գտնվում է ծովի մակարդակից 2180մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից կազմում է 72կմ, Աշտարակից 59 կմ, Մ-3 Աշտարակ-Սպիտակ միջպետական ավտոմայրուղուց 5կմ:

Կլիման բարեխառն ցուրտ լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18°C -ի սահմաններում, հունվարինը՝ -24 - 28°C սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Ավշեն գյուղի բնակչության թիվը կազմում է 435 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Ավշենի բնակչության թիվը, մարդ, ա.թ.	435
0-5 տարեկան	16
6-14 տարեկան	48
15-18 տարեկան	22
19-62 տարեկան	290
63 և ավելի տարեկան	59
Տղամարդիկ	223
Կանայք 53%	212

Գյուղն ունի կապի հանգույց, գրադարան եւ դպրոց: Սկնակ դպրոց հաճախում է 18, իսկ հանրակրթական դպրոց 39 աշակերտ: Նախնական մասնագիտական կրթություն ստանում է 1 աշակերտ:

Գյուղի բնակարանային ֆոնդը կազմում է 4.51հազ.քառ.մ, որը կազմված է 45 անհատական բնակելի տներից:

Զբաղվում են գյուղատնտեսությամբ, մշակում են հացահատիկային, կերային կուլտուրաներ: Գյուղացիական տնտեսությունների թիվը 35-ն է: Խոշոր երջերավոր կենդանիները 504 գլուխ, մանր երջերավոր կենդանիները՝ 626 գլուխ: Մշակում են կաթ եւ կաթնամթերք:

Գյուղատնտեսական տեխնիկայից գյուղում կա 8 միավոր տրակտոր: Արդյունաբերական կազմակերպություններ չկան:

Ռոռզումը կատարվում է մասամբ: Կենցաղային ջրամատակարարումը մշտական է տեղական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է 1/100կՎա տ/ե: Գազիֆիկացման աստիճանը 25%:

Գյուղն ունի երկու գերեզմանոց 10.3 հա ընդհանուր տարածքով:

Գյուղապատկան հողերի տարածքում միջպետական կամ հանրապետական ավտոմայրուղիներ չկան: Ներքին ճանապարհային ցանցի երկարությունը 3.8կմ է:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է դպրոցի շենքի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Համայնքն ունի ընթացիկ քաղաքաշինական քարտեզ (գլխավոր հատակագիծ), քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն, ինչպես նաև աղբավայր:

3.1.3 Կանխաշիր բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 49կմ, Երևանից 71կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Սանգյար, Սենկար, Քիչիկ, Քիչիկ Ջանգի, Քուչիկ Ջանգի անվանումները: Գյուղի շրջակայքում կան հին դամբարաններ: Գյուղը տեղադրված է Արագածի հյուսիս-արևելյան ստորոտում: Գյուղի մոտ է գտնվում նաև Սանգյաթթափա լեռը: Տեղադրված է ծովի մակարդակից 2150մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 25-28°C սահմաններում, հունվարյանը՝ -14-24°C սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Կանխաշիր գյուղի բնակչության թիվը կազմում է 498 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	498
0-5 տարեկան	22
6-14 տարեկան	69
15-18 տարեկան	28

19-62 տարեկան	325
63 և ավելի տարեկան	54
Տղամարդիկ	238
Կանայք	258
Տնային տնտեսությունների թիվը	65

Բնակարանային ֆոնդը կազմում է 4.37հազ.քառ.մ, որից 3 բազմաբնակարան շենքերի ընդհանուր մակերեսը 0.227հազ.քառ.մ, 53 առանձնատան մակերեսը՝ 4.143հազ.քառ.մ:

Կանխաշիր գյուղն ունի դպրոց՝ որի սկսնակ աշակերտների թիվը 14, հանրակրթական դասարանների աշակերտներինը՝ 32 աշակերտ:

Կենցաղային ջրամատակարարումը մշտական է տեղական աղբյուրներից: Ոռոգումը կատարվում է մասամբ: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է 1/1000կՎա տ/ե: Գազիֆիկացումը կազմում է 32%: Գյուղն աղբավայր չունի:

Գյուղի մոտով անցնում է հանրապետական նշանակության ճանապարհ, ներհամայնքային ճանապարհների երկարությունն է 2.7կմ:

Գյուղի գերեզմանոցը զբաղեցնում է 1.5հա:

Գյուղն ունի հաստատված գլխավոր հատակագիծ:

Գյուղի տնտեսության մասնագիտացման ճյուղը անասնապահությունն է, գյուղացիական տնտեսությունների թիվը 46-ն է: Զբաղվում են խոշոր՝ (222 գլուխ) եւ մանր (252 գլուխ) եղջերավոր անասնաբուծությամբ, կաթնամսատու ուղղվածությամբ:

Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարելորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.4 Ճարճակիս բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Ալագյազ խոշորացված համայնքի կազմում: Մարզկենտրոնից գտնվում է 48կմ, Երևանից 72կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դերեք, Ճարճակես, Ճարճարիս, Զարջառիս անվանումները: Գյուղի շրջակայքում կան 5-րդ դարում կառուցված եկեղեցու ավերակներ: Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի լանջին, Զարջառիս գետի վերին հոսանքում, գտնվում է ծովի մակարդակից 2160մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 25-280C սահմաններում, հունվարյանը՝ -18-240C սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սելահողային տափաստաններ են:

Ճարճակիս գյուղի բնակչության թիվը կազմում է 697 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	697
0-5 տարեկան	38
6-14 տարեկան	95
15-18 տարեկան	40
19-62 տարեկան	449
63 և ավելի տարեկան	74
Տղամարդիկ	354
Կանայք	343

Տնային տնտեսությունների թիվը 171:

Բնակարանային ֆոնդը բաղկացած է 93 անհատական առանձնատներից և կազմում է 11.189 հազ.քառ.մ:

Ճարձակիս գյուղն ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց: Տարրական դպրոց հաճախում է 42, իսկ հանրակրթական 94 աշակերտ:

Արդյունաբերական կազմակերպություններ չկան:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Խոշոր երջերավոր կենդանիները 843 գլուխ, մանր երջերավոր կենդանիները՝ 779 գլուխ, խոզեր 10 գլուխ:

Գյուղատնտեսական տեխնիկայից գյուղում կա 13 տրակտոր: Աղբավայր չկա:

Ոռոգումը կատարվում է մասամբ: Կենցաղային ջրամատակարարումը մշտակա տեղական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է մեկ 100կՎա ե/տ: Գազիֆիկացված չէ:

Գյուղն ունի 2 գերեզմանոց, ընդհանուր տարածքը 5հա:

Միջպետական և հարրապետական նշանակության մայրուղիներ տարածքով չեն անցնում: Ներգյուղական ճանապարհների երկարությունը 3.8կմ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.5 Միջնատուն բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 57կմ, Երևանից 77կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից 2180մ բարձրության վրա:: Միջնատունն ընկած է Փամբակի լեռների հարավային լանջին:

Գյուղը հիմնադրվել է 1831թ., իսկ 2006թ. անվանվել է Միջնատուն (նախկին անունն է՝ Օրթաճյա):

Կլիմայի բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 23-27°C սահմաններում, հունվարյանը՝ -18-24°C սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սելահոդային տափաստաններ են:

Միջնատուն գյուղի բնակչության թիվը կազմում է 273 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	273
0-5 տարեկան	9
6-14 տարեկան	34
15-18 տարեկան	20
19-62 տարեկան	182
63 և ավելի տարեկան	28
Տղամարդիկ	134
Կանայք	142
Ընտանիքների /ծխերի/ թիվը	295

Տնային տնտեսությունների թիվը 45:

Բնակարանային ֆոնդը բաղկացած է 62 անհատական առանձնատներից և կազմում է 3.88 հազ.քառ.մ: Միջնատուն գյուղն ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց: Տարրական դպրոց հաճախում է 9, իսկ հանրակրթական 26 աշակերտ:

Արդյունաբերական կազմակերպություններ չկան:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնաբուծությամբ: Խոշոր երջերավոր կենդանիները 550 գլուխ, մանր երջերավոր կենդանիները՝ 15 գլուխ:

Գյուղատնտեսական տեխնիկայից գյուղում կա 11 տրակտոր: Աղբավայր չկա:

Ոռոգումը կատարվում է մասամբ: Կենցաղային ջրամատակարարումը մշտակա տեղական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է մեկ 100կՎա ե/տ: Գազիֆիկացված չէ:

Գյուղն ունի 2 գերեղմանոց, ընդհանուր տարածքը 3.5հա:

Միջպետական և հարրապետական նշանակության մայրուղիներ տարածքով չեն անցնում: Ներգյուղական ճանապարհների երկարությունը 3.2կմ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.6 Միրաք բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 37կմ, Երևանից 61կմ հեռավորության վրա Գյուղի մոտակայքում կան հին գյուղատեղի եւ դամբարաններ, ավերված V-VI դարեր եկեղեցի եւ գերեզմաններ: Տեղադրված է Քասաղ

գետի վերին հոսանքում, Ծաղկունյաց լեռնաշղթայի արեւմտյան լանջերին՝ ծովի մակարդակից 2120մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-1⁸⁰C սահմաններում, հունվարյանը՝ -20,-25°C-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սելահոդային տափաստաններ են:

Միրաք գյուղի բնակչության թիվը կազմում է 0.133հազ.մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	133
0-5 տարեկան	8
6-14 տարեկան	21
15-18 տարեկան	9
19-62 տարեկան	82
63 և ավելի տարեկան	13
Տղամարդիկ	64
Կանայք	69
Տնային տնտեսությունների թիվը 35:	

Բնակարանային ֆոնդը բաղկացած է 25 անհատական առանձնատներից և կազմում է 2.70 հազ.քառ.մ:

Միրաք գյուղն ունի դպրոց, գրադարան, կապի հանգույց: Տարրական դպրոց հաճախում է 7, իսկ հանրակրթական 12 աշակերտ:

Արդյունաբերական կազմակերպություններ չկան:

Միրաք համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնաբուծությամբ: Խոշոր երջերավոր կենդանիները 118 գլուխ, մանր երջերավոր կենդանիները՝ 331 գլուխ:

Միրաքը գյուղատնտեսական տեխնիկա և աղբավայր չկա:

Ոռոգումը կատարվում է մասամբ: Կենցաղային ջրամատակարարումը մշտական տեղական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է մեկ 100կՎա ե/տ: Գազիֆիկացված չէ:

Միրաք գյուղն ունի 4 գերեզմանոց, ընդհանուր տարածքը 2.7հա:

Միջպետական և հարրապետական նշանակության մայրուղիներ տարածքով չեն անցնում: Ներգյուղական ճանապարհների երկարությունը 3.2կմ:

Միրաք համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.7 Շենկանի բնակավայր

Շենկանի գյուղը գտնվում է Արագածի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 53կմ, Երևանի 73կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կոռյի

Գեղ անվանումը: Շենկանի անվանվել է 1978թ-ին: Գյուղը տեղադրված է Արագած լեռան հյուսիս-արեւելյան ստորոտում, ծովի մակարդակից 2200մ վրա:

Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18°C-ի սահմաններում, հունվարյանը՝ -25,-30°C-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սելահոդային տափաստաններ են:

Շենկանի գյուղի բնակչության թիվը կազմում է 0.318հազ.մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	318
0-5 տարեկան	16
6-14 տարեկան	52
15-18 տարեկան	16
19-62 տարեկան	209
63 և ավելի տարեկան	25
Տղամարդիկ	168
Կանայք	150
Տնային տնտեսությունների թիվը 65:	

Բնակարանային ֆոնդը բաղկացած է 53 անհատական առանձնատներից և կազմում է 4.0 հազ.քառ.մ:

Շենկանին ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Տարրական դպրոց հաճախում են 11, հանրակրթական 29 աշակերտ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություն՝ 1, նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն՝ 1 ուսանող:

Շենկանի համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Զբաղվում են նաեւ խոշոր (331 գլուխ) եւ մանր (94 գլուխ) եղջերավոր անասնաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի:

Շենկանին ունի մեկ տրակտոր: Չունի աղբավայր:

Ոռոգումը կատարվում է մասամբ: Կենցաղային ջրամատակարարումը մշտական տեղական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է մեկ 100կՎա ե/տ: Գազիֆիկացված չէ:

Շենկանի գյուղն ունի 2 գերեզմանոց, ընդհանուր տարածքը 5հա:

Միջպետական և հարրապետական նշանակության մայրուղիներ տարածքով չեն անցնում: Ներգյուղական ճանապարհների երկարությունը 3.9կմ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.8 Ձամշլու բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Երևան-Սպիտակ ավտոխճուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 56կմ, Երևանից 68կմ հեռավորության վրա: 1988թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից գյուղում եղել են ավերվածություններ: Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի ստորոտում, Քասաղ գետի հովտում, ծովի մակարդակից 2150մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 25C-26°C սահմաններում, հունվարինը՝ -24C, -26°C սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Զամշլու գյուղի բնակչության թիվը կազմում է 319 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	319
0-5 տարեկան	17
6-14 տարեկան	44
15-18 տարեկան	14
19-62 տարեկան	206
63 և ավելի տարեկան	38
Տղամարդիկ	145
Կանայք	174
Ընտանիքների /ծխերի/ թիվը	75

Զամշլու գյուղի բնակարանային ֆոնդը 4.205հազ.քառ.մ կազմված է 49 անհատական առանձնատներից: Զամշլուն ունի դպրոց՝ 14 աշակերտ սկսնակ, 39 աշակերտ հանրակրթական դասարաններում: Մարզադպրոց հաճախում են 6 աշակերտ: Արդյունաբերական կազմակերպություններ չունի: Զամշլու համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնաբուծությանը: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը 371 գլուխ, մանր եղջերավոր կենդանիներինը՝ 410 գլուխ: Գյուղատնտեսական տեխնիկայից գյուղում առկա է 8 տրակտոր:

Զամշլու գյուղը ունի հաստատված գլխավոր հատակագիծ: Գերեզմանոցի տարածքը կազմում է 4հա:

Ոռոգումը կատարվում է մասամբ:, Կենցաղային ջրամատակարարումը մշտական է, որի համար օգտագործվում են բնական աղբյուրների ջուրը: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է 1/1000կՎա տ/է: Գազիֆիկացված է գյուղի 15%: Աղբավայր չկա:

Զամշլու գյուղի տարածքով անցնում է 1.5կմ երկարությամբ միջպետական նշանակության ճանապարհ: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 3.6կմ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.9 Ռյա Թագա բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 53կմ, Երևանից 73կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կոնդախասագ անվանումը: Ռյա Թագա է անվանվել 1978 թ-ին: Ռյա Թագա գյուղի շրջակայքում պահպանվել են 10-13դդ հայկական եկեղեցի եւ հին գերեզմաններ:

Ռյա Թագան տեղադրված է ծովի մակարդակից 2050մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 25-28°C-ի սահմաններում, հունվարյանը՝ -18-24°C սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Ռյա Թագա գյուղի բնակչության թիվը կազմում է 319 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	740
0-5 տարեկան	38
6-14 տարեկան	113
15-18 տարեկան	55
19-62 տարեկան	464
63 և ավելի տարեկան	70
Տղամարդիկ	377
Կանայք	363
Տնային տնտեսությունների թիվը	144

Ռյա Թագա գյուղի բնակարանային ֆոնդը 11.39 հազ.քառ.մ կազմված է 150 անհատական առանձնատներից:

Ռյա Թագան ունի դպրոց՝ 32 աշակերտ տարրական, 88՝ աշակերտ հանրակրթական դասարաններում: Ունի գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Ռյա Թագա համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը, խոշոր՝ 1196 գլուխ եւ մանր 1437 գլուխ եղջերավոր անասուններ:

Ռյա Թագա գյուղը արդյունաբերություն չունի:

Ռյա Թագա գյուղը ունի հաստատված գլխավոր հատակագիծ: Երեք գերեզմանոցի տարածքը կազմում է 6.05հա:

Ոռոգումը կատարվում է մասամբ:, Կենցաղային ջրամատակարարումը մշտական է բնական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է 1/100կՎա տ/ե: Գազիֆիկացված է գյուղի 26%: Աղբավայր չկա:

Ռյա Թագա գյուղի տարածքով անցնում է 1.2կմ երկարությամբ միջպետական նշանակության ճանապարհ: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 4.5կմ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.10 Սադունց բնակավայր

Գյուղ Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանում: Նախկինում կոչվել է Քարավանսարա: Մարզկենտրոնից գտնվում է 51կմ, Երևանից 75կմ հեռավորության վրա: Գյուղի շրջակայքում նշմարվում են հին հայկական բնակավայրի մնացորդներ: Գտնվում է Արագածի հյուսիսային ստորոտում, սարավանդի վրա, ծովի մակարդակից 2100մ:

Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 24-28°C-ի սահմաններում, հունվարյանը՝ -24-26°C-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սելահողային տափաստաններ են:

Սադունց գյուղի բնակչության թիվը կազմում է 319 մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	353
0-5 տարեկան	31
6-14 տարեկան	57
15-18 տարեկան	12
19-62 տարեկան	213
63 և ավելի տարեկան	40
Տղամարդիկ	173
Կանայք	160
Տնային տնտեսությունների թիվը	69

Սադունց գյուղի բնակարանային ֆոնդը 6.624հազ.քառ.մ կազմված է 50 անհատական առանձնատներից:

Սադունցն ունի դպրոց՝ 14 աշակերտ տարրական, 20՝ աշակերտ հանրակրթական դասարաններում:

Սադունց համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը, խոշոր՝ 344 գլուխ եւ մանր 231 գլուխ եղջերավոր անասուններ:

Սադունց գյուղը արդյունաբերություն չունի:

Սադունցն ունի հաստատված գլխավոր հատակագիծ: Երկու գերեզմանոցի տարածքը կազմում է 1.6հա:

Ոռոգումը կատարվում է մասամբ: Կենցաղային ջրամատակարարումը մշտական է բնական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է 1/100 կՎա տ/ե: Գազիֆիկացված է գյուղի 22%: Աղբավայր չկա:

Սադունց գյուղի տարածքով անցնում է 2.2կմ երկարությամբ հանրապետական նշանակության ճանապարհ: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 4.3կմ:

Սադունց համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Արդյունաբերության մեջ զարգացած է սննդի արդյունաբերությունը: Այստեղ է գտնվում պանրի գործարանը, որն արտադրում է 'Չանախ' տիպի պանիր:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է դպրոցի շենքի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.1.11 Միփան բնակավայր

Գյուղ Արագածի տարածաշրջանում, Մարզկենտրոնից գտնվում է 48կմ, Երևանից 68կմ հեռավորության վրա: Միփան է անվանվել 1978թ-ին: Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակարդակից 2180մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 22-28-24-26°C-ի սահմաններում, հունվարյանը՝ -24-26°C-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Միփան գյուղի բնակչության թիվը կազմում է 0.350հազ.մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	350
0-5 տարեկան	18
6-14 տարեկան	44
15-18 տարեկան	21
19-62 տարեկան	229
63 և ավելի տարեկան	38
Տղամարդիկ	170
Կանայք	180
Տնային տնտեսությունների թիվը	86

Միփան գյուղի բնակարանային ֆոնդը 6.602 հազ.քառ.մ կազմված է 70 անհատական առանձնատներից:

Միփանն ունի դպրոց՝ 13 աշակերտ տարրական, 32՝ աշակերտ հանրակրթական դասարաններում:

Միփան համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը, խոշոր՝ 351 գլուխ եւ մանր 458 գլուխ եղջերավոր անասուններ: Գյուղատնտեսական տեխնիկայից գյուղն ունի 12 տրակտոր:

Միփան գյուղը արդյունաբերություն չունի:

Միփանն ունի հաստատված գլխավոր հատակագիծ: Գերեզմանոցի տարածքը կազմում է 2.5 հա:

Ոռոգումը կատարվում է մասամբ:, Կենցաղային ջրամատակարարումը մշտական է բնական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է 2/400 կՎա տ/ե: Գազիֆիկացված է գյուղի 20%: Աղբավայր չկա:

Միփան գյուղի տարածքով միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհներ չեն անցնում: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 2.2 կմ:

Սադունց համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է դպրոցի շենքի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Ալազյազ համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները 2և 1				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Գյուղատնտեսական հողերից՝	1.94		
			Բնակավայրերի	1.82
17 (Ալազյազ)	վարելահող	0.08	հասարակական կառուցապ.	0.08
21 (Միրաք)	արոտավայրեր	0.10	հասարակական կառուցապ.	0.10
23 (Շենկանի)	արոտավայրեր	0.22	Տնամերձ կառուցապատման	0.22
29 (Շենկանի)	արոտավայրեր	1.42	Տնամերձ կառուցապատման	1.42
			Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.	0.12
12 (Ալազյազ)	վարելահող	0.12	կապի	0.12
	Բնակավայրի հողերից՝	1.98		
			Բնակավայրերի	1.98
8 (Ջամշու)	Տնամերձ կառուցապատման	0.05	հասարակական կառուցապ.	0.05
13 (Ալազյազ)	Տնամերձ կառուցապատման	0.16	հասարակական կառուցապ.	0.16
19 (Ռյաթազա)	Տնամերձ	0.08	հասարակական	0.08

	կառուցապատման		կառուցապ.	
18 (Ռյաթագա)	հասարակական կառուցապ.	0.06	Տնամերձ կառուցապատման	0.06
24 (Կանխաշիր)	հասարակական կառուցապ.	0.04	Տնամերձ կառուցապատման	0.04
3 (Ավշեն)	Այլ հողեր	0.04	Տնամերձ կառուցապատման	0.04
7 (Միջնատուն)	Այլ հողեր	0.17	Տնամերձ կառուցապատման	0.17
14 (Ալազյազ)	Այլ հողեր	0.39	Տնամերձ կառուցապատման	0.39
15 (Ալազյազ)	Այլ հողեր	0.10	Տնամերձ կառուցապատման	0.10
16 (Ալազյազ)	Այլ հողեր	0.17	Տնամերձ կառուցապատման	0.17
26 (Սադունց)	Այլ հողեր	0.21	Տնամերձ կառուցապատման	0.21
28 (Սադունց)	Այլ հողեր	0.13	Տնամերձ կառուցապատման	0.13
1 (Միփան)	Այլ հողեր	0.11	հասարակական կառուցապ.	0.11
20 (Ռյաթագա)	Այլ հողեր	0.08	հասարակական կառուցապ.	0.08
22 (Շենկանի)	Այլ հողեր	0.19	հասարակական կառուցապ.	0.19
	Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ.	9.68		
			Բնակավայրերի	9.68
2 (Միփան)	գյուղատնտեսական, արտադր.	0.57	Տնամերձ կառուցապատման	0.57
4 (Ավշեն)	գյուղատնտեսական, արտադր.	0.03	Տնամերձ կառուցապատման	0.03
5 (Ավշեն)	գյուղատնտեսական, արտադր.	0.55	Տնամերձ կառուցապատման	0.55
6 (Ճարճակիս)	գյուղատնտեսական, արտադր.	1.35	Տնամերձ կառուցապատման	1.35
10 (Զամշլու)	գյուղատնտեսական, արտադր.	0.32	Տնամերձ կառուցապատման	0.32
11 (Զամշլու)	գյուղատնտեսական, արտադր.	0.06	Տնամերձ կառուցապատման	0.06
27 (Սադունց)	գյուղատնտեսական, արտադր.	4.64	Տնամերձ կառուցապատման	4.64
9 (Զամշլու)	գյուղատնտեսական, արտադր.	0.09	հասարակական կառուցապ.	0.09
25 (Կանխաշիր)	գյուղատնտեսական, արտադր.	2.07	հասարակական կառուցապ.	2.07
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական հողերից	1.35		
			Բնակավայրերի	1.35

11 (Միրաք)	արոտավայրեր	0.55	հասարակական կառուցապ.	0.55
9 (Ալազյազ)	այլ հողատեսքեր	0.80	Տնամերձ կառուցապատման	0.80
	Բնակավայրի հողերից	4.16		
			Բնակավայրերի	4.16
1 (Միփան)	Այլ հողեր	0.53	Տնամերձ կառուցապատման	0.53
3 (Ավշեն)	Այլ հողեր	0.46	Տնամերձ կառուցապատման	0.46
4 (Ճարճակիս)	Այլ հողեր	0.37	Տնամերձ կառուցապատման	0.37
5 (Միջնատուն)	Այլ հողեր	0.56	Տնամերձ կառուցապատման	0.56
6 (Միջնատուն)	Այլ հողեր	0.59	Տնամերձ կառուցապատման	0.59
8 (Զամշլու)	Այլ հողեր	0.57	Տնամերձ կառուցապատման	0.57
12 (Միրաք)	Այլ հողեր	0.46	Տնամերձ կառուցապատման	0.46
13 (Շենկանի)	Այլ հողեր	0.30	Տնամերձ կառուցապատման	0.30
14 (Կանիաշիր)	Այլ հողեր	0.09	հասարակական կառուցապ.	0.09
10 (Ռյաթազա)	հասարակական կառուցապ.	0.23	Տնամերձ կառուցապատման	0.23
	Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ.	1.52		
			Բնակավայրերի	1.52
2 (Միփան)	գյուղտնտեսական, արտադր.	0.59	Տնամերձ կառուցապատման	0.59
7 (Զամշլու)	գյուղտնտեսական, արտադր.	0.53	Տնամերձ կառուցապատման	0.53
15 (Սադունց)	գյուղտնտեսական, արտադր.	0.40	Տնամերձ կառուցապատման	0.40
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Գյուղատնտեսական հողերից՝	0.85		
			Բնակավայրերի	0.85
5 (Զամշլու)	այլ հողատեսքեր	0.30	Տնամերձ կառուցապատման	0.30
6 (Ալազյազ)	այլ հողատեսքեր	0.55	Տնամերձ կառուցապատման	0.55
	Բնակավայրի հողերից	2.18		
			Բնակավայրերի	2.18
3 (Ճարճակիս)	Այլ հողեր	0.81	Տնամերձ կառուցապատման	0.81

8 (Միրաք)	Այլ հողեր	0.67	Տնամերձ կառուցապատման	0.67
9 (Շենկանի)	Այլ հողեր	0.25	Տնամերձ կառուցապատման	0.25
10(Կանիաշիր)	Այլ հողեր	0.06	Տնամերձ կառուցապատման	0.06
4 (Միջնատուն)	Այլ հողեր	0.39	հասարակական կառուցապ.	0.39
	Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ.	2.52		
			Բնակավայրերի	2.52
1 (Սիփան)	գյուղտնտեսական, արտադր.	0.42	Տնամերձ կառուցապատման	0.42
2 (Ավշեն)	գյուղտնտեսական, արտադր.	0.31	Տնամերձ կառուցապատման	0.31
7 (Ալազյազ)	գյուղտնտեսական, արտադր.	0.53	Տնամերձ կառուցապատման	0.53
11 (Մադունց)	գյուղտնտեսական, արտադր.	1.26	Տնամերձ կառուցապատման	1.26

2.2 Մելիքցյուղ համայնք

Մելիքցյուղ համայնքը գտնվում է Ապարանի տարածաշրջանում, մարզկենտրոնից 50կմ, Երևանից 70կմ հեռավորությամբ, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների միացման վայրից դեպի արևմուտք, ձգվում երկու լեռնաբազուկների միջև, որոնցից հարավայրին կոչվում է Թուխմանուկ (2761մ), իսկ հյուսիսայինը՝ Շողակաթ (2700մ): Գյուղը տեղ է զբաղեցնում երկու բլուրների միջև, հարավային լանջին: Ծովի մակերևույթից գյուղի բարձրությունը հասնում է 2181 մ: Մոտակա կիրճի միջով է հոսում Քասախի ձախ վտակ Գետուկը:

Ձմեռը տեւական և ցուրտ է, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 22-28-24-26°C-ի սահմաններում, հունվարյանը՝ -24-26°C-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Մելիքցյուղ գյուղի բնակչության թիվը կազմում է 1.196հազ.մարդ, սեռատարիքային կազմը ներկայացված է աղյուսակում:

Բնակչության թիվը, մարդ, ա.թ.	1196
0-5 տարեկան	80
6-14 տարեկան	142
15-18 տարեկան	52

19-62 տարեկան	722
63 և ավելի տարեկան	200
Տղամարդիկ	618
Կանայք	578

Տնային տնտեսությունների թիվը 264

Մելիքգյուղի բնակարանային ֆոնդը 36.24հազ.քառ.մ կազմված է 264 անհատական առանձնատներից:

Մելիքգյուղն ունի հանրակրթական դպրոց՝ 129 աշակերտով: ԲՈՒՀ-եր հաճախողների թիվը 27-է:

Մելիքգյուղ համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը, խոշոր՝ 987 գլուխ եւ մանր 896 գլուխ եղջերավոր անասուններ և 99 խոզ: Գյուղատնտեսական տեխնիկայից գյուղն ունի 5 տրակտոր և 2 կոմբայն:

Մելիքգյուղ արդյունաբերություն չունի: Գյուղից արևելք՝ 1,5-2կմ հեռավորության վրա, հայտնաբերվում են «Թուխմանուկ» ոսկու և բազմզմետաղների պաշարներ: Հանքի շահագործումը հանձնվում է «Մեգո գոլդ» ՍՊԸ-ին: Հանքի շրջակա միջավայրի, անասնապահության և առողջապահության վրա վտանգավոր ներգործության և ընկերությունը հարկադրված սնանկ ճանաչելու պահանջով 2017թ-ից չի գործում:

Մելիքգյուղը չունի հաստատված գլխավոր հատակագիծ:

Ոռոգումը կատարվում է 2 աղբյուրներից: Կենցաղային ջրամատակարարումը մշտական է 3 բնական աղբյուրներից: Էլեկտրամատակարարման ցանցում գործում է 4/910կՎա տ/ե: Գյուղը գազիֆիկացված չէ: Աղբավայր չկա:

Մելիքգյուղի տարածքով միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհներ չեն անցնում: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 18կմ:

Մելիքգյուղի համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Մելիքգյուղ համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Ձև 1				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրի հողերից՝	0.52		
			Բնակավայրերի	0.52

4	Տնամերձ կառուցապատման	0.31	հասարակական կառուցապ.	0.31
3	Այլ հողեր	0.21	Տնամերձ կառուցապատման	0.21
	Արդյունաբ., ընդերքագ. և այլ արտ. նշանակութ. օբ.	0.62		
			Բնակավայրերի	0.62
1	պահեստարանների	0.37	Տնամերձ կառուցապատման	0.37
2	պահեստարանների	0.25	Տնամերձ կառուցապատման	0.25
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Բնակավայրի հողերից՝	0.18		
			Բնակավայրերի	0.18
1	Այլ հողեր	0.18	Տնամերձ կառուցապատման	0.18
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Բնակավայրի հողերից՝	0.20		
			Բնակավայրերի	0.20
1	Այլ հողեր	0.20	Տնամերձ կառուցապատման	0.20

4.0 Օդերևութաբանակլիմայական պայմանները

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանակլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

Դիտարկվող տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացված են «ՀԱՅՊԵՏՀԻԴՐՈՍԵՏ»-ի կողմից /3/: Տեղանքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Արտաշատ օդերևութաբանական կայանների բազմամյա դիտարկումների տվյալները: Օգտագործելով կլիմայական հաշվարկային մեթոդները, հաշվարկվել են տեղանքի կլիմայական բնութագրերը:

4.1 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը/4,5/

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից

- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 2-ում:

Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Աղյուսակ 1

Կլիմայի գործոնները	Հարմարավետու թյունը	Անհարմարավետությունը	
		գերտաքացում	Սառեցում
Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	-30-35, -1.5 մ/վրկ, -25, 2.0 մ/վրկ, -15, 3. մ/վրկ Քամու դեպքում
Քամու արագությունը, մ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
Հարաբերակա ն խոնավությունը, %	30-70 մայիս-օգոստոս	30-ից փոքր 70-ից բարձր Մնացած 9 ամիս	80-ից բարձր Չկա

Մակերևույթի նիշերի բազմազան տատանումների շնորհիվ կլիման նույնպես բազմազան է: Մեծ են ցածրադիր և բարձրադիր մասերի կլիմայական պայմանների տարբերությունները: Եթե տարվա ամենատաք ամսվա՝ հուլիսի միջին ջերմաստիճանը լեռան ստորոտում լինում է 24°C-ից ոչ պակաս, ապա բարձր լեռնային գոտում չի բարձրանում 60C-ից: Արագածի մերձգագաթային հատվածում նույնիսկ ամռանը կարելի է հանդիպել ձնաբծերի: Նույն օրինաչափությամբ էլ լանջերն ի վեր փոխվում է մթնոլորտային տեղումների քանակը՝ 400մմ-ից մինչև 1000մմ:

Օդի միջին ջերմաստիճանը, °C , ըստ ամիսների

Նիշ ծովի մակերևույթից	Ամիսներ												ար ի
		I	II	V		I	II	III	X		I	II	
2100- 2200	8.8	7.7	3.7	.2	.1	1.4	4.6	4.9	1.1	.4	0.4	6.4	.3

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

Միջին հարաբերական խոնավությունը ժամը 13-ի դրությամբ կազմում է՝
ամենացուրտ ամսին՝ 76%, ամենաշոգ ամսին՝ 48%:

Նիշ ծովի մակերևույթից	Ամիսներ												տ արի
		I	II	V		I	II	III	X		I	II	
2100- 2200	7	6	4	0	1	1	3	0	7	4	3	6	7 3

Ստորոտներում ընկած հարթավայրերի և Արագածի լեռնազանգվածի միջև ջերմային կոնտրաստները առաջացնում են լեռնա-հարթավայրային քամիներ, հատկապես ամռանը: Առանձին դեպքերում քամու արագությունը հասնում է 15-20մ/վ): Ձմռանը հարթավայրի սահմաններում դիտվում է թույլ քամի առանց հոդմի:

Ձմեռը ցուրտ է, չոր, քիչ ձյունոտ: Ձնածածկով օրերի միջին թիվը 45, ձմեռվա ընթացքում ձյան ծածկույթի միջին բարձրությունը 60սմ:

Գարունը տևական չէ, տաք է, հիմնականում խոնավ և սկզբում առանձնանում է փոփոխականությամբ: Գարնանային սառցակալումները, միջին տվյալներով, կրճատվում են ապրիլի 2-րդ տասնօրյակին:

Ամառը տևական է, շոգ, չոր, պարզ եղանակի գերակշռմամբ: Ամառային ամիսների միջին ջերմաստիճանը 24.2oC, առավելագույնը՝ +41oC:

Չգալի են նաև օրական տատանումները: Ցերեկային ժամերին հարաբերական խոնավությունը իջնում է մինչև 30%: Աշունը չոր է, տևական և փափուկ, արևային, տաք և չոր եղանակի գերակշռմամբ:

Մթնոլորտային միջին ամսական տեղումները, մմ

Նիշ ծովի մակերևույթից բարձր, մ	Ամիսներ												տ արի
		I	II	V		I	II	III	X		I	II	
2100- 2200	6	6	3	2	5	5	4	6	2	7	1	7	5 54

Ձնածածկույթ

Նիշ ծովի մակերևույթից, մ	Առավելագույն տասնօր յակային բարձրու թյունը, սմ	Տարվա մեջ ձնածած կույթով օրերի քանակը
2100-2200	65	122

«Արագածոտն-10» ՄՄՀՏՊՓ տարածքի ծովի մակարդակից բարձրությունը կազմում է շուրջ 2100-2200մ: Տարածքը բարենպաստ է հացահատիկի, կարտոֆիլի եւ բանջարեղենի մի քանի տեսակների արտադրության, ինչպես նաև առանձնահատուկ խոշոր և մանր եղջրավոր անասնապահության համար: ՀՀ Արագածոտնի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան հարթավայրին հարող Արագածի լեռնազանգվածի ստորոտներում: Ամռանը տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ:

Մարզի հյուսիս-արևելյան տարածքները բարձրադիր են և էապես տարբերվում են կլիմայական պայմաններով:

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անալիզը ցույց է տալիս, որ նշված համայնքներում 1T, 2T և 3T դասերի «շոգ» եղանակները դիտարկվում են հուլիս, օգոստոս ամիսներին, որի ընթացքում առաջանում է ջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա: Հարմարավետության ժամանակահատվածը ժամը 13-ից մինչև ժամը 21-ը նշված համայնքների համար կազմում է 83%, անհարմարավետության ժամանակահատվածը 17%:

Անհարմարավետության պայմանների հաշվառման չափանիշը հանդիսանում է անհարմարավետության ժամանակահատվածի տևողությունը:

Տարվա կտրվածքով անհարմարավետության ժամանակահատվածը փոքր է 8% (17%) տարեկան ժամանակահատվածից, որը հանգեցնում է նրան, որ նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել մի շարք հատուկ միջոցառումներ:

5.0 Լանդշաֆտի նկարագիրը

Արագածոտնի մարզն զբաղեցնում է Արարատյան ֆիզիկա-աշխարհագրական շրջանի հյուսիսարևմտյան մասը (ծ.մ. 950-ից 4090մ և ավելի հարաբերական նիշեր)՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ընդհանուր թեքությամբ ընդգրկում է Արագածի գոգավորության, Արագած լեռնագանգվածի հյուսիս-արևմտյան, արևելյան, հարավ-արևելյան, հարավային և հարավ-արևմտյան նախալեռնային ստորոտները: «Արագածոտն-10» ՄՄՀՏՊ տարածքը գտնվում է մարզի հյուսիս-արևելյան հատվածում և մասամբ զբաղեցնում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հարավ-արևմտյան լանջերի ստորոտները:

Մարզի հարավում լեռնալանջերը ձուլվում են Արարատյան դաշտին, հյուսիսում ձգվում են մինչև Արագածի լեռնագագաթը: ՀՀ Արագածոտն մարզը ՀՀ այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները (950մ-ից մինչև 4090մ բացարձակ բարձրությունները): ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090մ) և Ծաղկասար (2219մ), Իրինդ (2050մ), Արտենի (2047մ) հանգած հրաբուխները: Մարզի ռելիեֆը գրավիչ է իչպես դահուկային սպորտի այնպես էլ լեռնագնացների համար, առկա են տարաբնույթ բարդության ուղիներ, հարմար տարբեր պատրաստվածություն ունեցող անձանց համար: Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քառապատկերներով ու լերկ ժայռերով: ՀՀ Արագածոտնի մարզում աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի,

կեչի, թեղի, հացենի և այլն: Արագածոտնի մարզում հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլորը, ճակնդեղը, զանազան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն: ՀՀ Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները:

Բնության հատուկ պահպանվող տարածքներից է «Արագածի ալպյան» արգելավայրը և բնության 23 հուշարձաններ:

«Արագածոտն-10» տարածքում օգտակար հանածոները բազմազան չեն, բայց պաշարները մեծ են: Դրանք հիմնականում հրաբխային ապարատեսակներին են՝ բազմագույն տուֆերը, բազալտը, պեռլիտը, հրաբխային խարամը, որոնք իրենց գոյությամբ պարտական են Արագած լեռան հրաբխային ժայթքումներին և ծառայում են որպես որակյալ շինանյութ: Պեռլիտը հանդես է գալիս ավազի ու խճի տեսքով: Հանդիպում են գրանիտի, մարմարի և այլ հանքավայրեր, որոնք հիմնականում շահագործվում են: Ներկայումս ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ 2 ոչ մետաղական: Օգտակար հանածոներից շահագործվում են նաև արծաթի (Ag), ոսկու (Au), և այլ հանքեր: Միննույն ժամանակ առկա են նաև դեռևս չշահագործվող հանքավայրեր:

5.1. Բուսական և կենդանական աշխարհ*/

*/Բաժինը մշակված է համապատասխան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն 21 հունիսի 2014 թ. ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի կետ6)-ի և SU 04 14.01.2021 Տեխնիկական առաջադրանքի պահանջների:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ տարածքի մեծ մասը սաստիկ դեգրադացված է՝ անասունների գերարոտածցման հետևանքով: Բնտենսիվ արածեցումը երկար տարիներ շարունակ բերել է հողաբուսական ծածկի խախտման: Լանջի վրա ձևավորվել են հեղեղատներ (խանդակ), որոնք նպաստում են լանջի ողողմանը: Դրա մասին են վկայում այստեղ աճող Տատասկ անատոլիական (*Cirsium anatolicum*) և Գայլաթաթ սրբաժակատերև (*Alchemilla oxysepala*) երկրորդային բուսատեսակները:

Շրջակա բուսականությունը ներկայացված է ենթալպիական մարգագետնով տրազականտների տեղամասերով՝ *Astragalus microcephalus*-ի (Գազ մանրագլխիկ) գերակայությամբ, ինչպես նաև խախտված բուսականությամբ:

ՀՀ ԳԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի և գրական տվյալների ուսումնասիրության արդյունքում հաստատված են բույսերի հետևյալ տեսակները.

- Festuca valesiaca* – Շյուդախոտ վալեսյան,
- Koeleria cristata* – Բարակոտնուկ սանրանման,
- Phleum phleoides* – Միզախոտ տափաստանային,
- Phleum alpinum* – Միզախոտ ալպիական
- Carex humilis* – Բոշխ ցածր,

Cephalaria gigantea - Զիվան հսկայական,
Veratrum album - Կեղծ դանձլամեր սպիտակ,
Heracleum pastinacifolium - Բալդրդան ստեպոնատերև,
Rumex alpinus - Ավելուկ ալպիական,
Rumex crispus - Ավելուկ գանգուր,
Polygonum alpinum - Մատիտեղ լեռնային,
Polygonum aviculare - Մատիտեղ ճնճուկի,
Chenopodium album – Թելուկ սպիտակ,
Chenopodium foliosum - Թելուկ բասմատերև,
Thymus kotschyanus – Ուրց Կոչիի,
Erigeron venustus - Գարնանաթարամ գեղեցիկ,
Hieracium pilosella - Ճուռակախոտ մազմզոտ,
Prunella vulgaris - Սևագլխիկ սովորական,
Scutellaria orientalis – Սաղավարտուկ արևելյան,
Artemisia absinthium - Օշինդր դառը,
Medicago dzhavachetica - Առվույտ ջավախետի,
Medicago lupulina - Առվույտ գայլուկանման,
Campanula rapunculoides - Զանգակ ռապունցելանման,
Hesperis matronalis - Երեքօրնիկ (մանուշակ գիշերային),
Bromus variegatus – Ցորնուկ խայտաբղետ,
Koeleria caucasica - Բարակոտնուկ կովկասյան,
Poa densa - Դաշտավուկ խիտ,
Euphrasia pectinata - Ակնախոտ սանրակերպ,
Pimpinella saxifraga – Քոշխոտ քարբեկային,
Helichrysum plicatum - Անթառամ ծալքավոր,
Tussilago farfara - Տատրակ սովորական,
Antyllis boissieri – Վիրախոտ Բուասեի և այլն:

Էնդեմիկ բուսատեսակներից այս տարածաշրջանին բնորոշ են Հիրիկազգիներ (*Iridaceae*)՝ Թրաշուշան հայաստանյան (*Gladiolus hajastanicus*), Հակինթազգիներ (*Hyacinthaceae*)՝ Աստղաշուշան Գաբրեիլյանի (*Ornithogalum gobreliaenae*):

Կենդանական աշխարհը – Տարածքում առկա են ողնաշարավոր կենդանիների միայն եզակի տեսակներ, ինչպիսիք են Գետիկ գետակում հանդիպող և համեմատաբար մեծաքանակ փոքրասիական գորտը (*Rana macrocnemis* Boul.), դաշտամկներ (*Chionomys nivalis*): Մողեսներից հանդիպում է՝ հայկական ժայռայինը (*Darevskia armeniaca* Meh.), օձերից պղնձօձը (*Coronella austriaca* Laur.), իսկ ջրամբարների և գետերի շրջակայքում հանդիպում են ջրային լորտուն (*Natrix tnessellata*), սովորական լորտուն (*N. natrix*):

Թռչնատեսակների բազմազանությամբ նույնպես տարածքն աչքի չի ընկնում: Դիտարկվող տարածքում և մերձակայքում հանդիպում են ճնճուկազգիներ՝ մոխրագույն ագռավը (*Corvus corone* L.), սևագլուխ դրախտապանը (*Emberiza melanocephala* Scop.), սովորական քարաթռչնակը (*Oenanthe oenanthe* L.):

Պետք է նշել, որ այսպիսի ինտենսիվ օգտագործված ու խախտված բուսածածկույթով տարածքները բարենպաստ չեն կենդանիների բնակեցման համար:

Որսա - արդյունագործական կենդանատեսակներից այս տարածաշրջանում հանդիպում են նապաստակը, գորշուկը:

Քասաղ գետի և նրա վտակների ձկնաշխարհը ներկայացնում են՝ Հայկական տառեխիկը (*Alburnoides bipunctatus armeniensis*), Հայկական գուստերան (*Blicca bjoerkna derjavini*), Քուռի ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchum cyri*), Լերկաձուկ անգորականը (*Nemachilus angorae*), Լերկաձուկ Քուռին (*Nemachilus brandti*), Ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva*), Ծածանը (*Cyprinus carpio*), Պարսկական քարթակը (*Gobio persa*), Քուռի սպիտակաձուկը (*Alburnus filippi*), Ծականը (*Cobitius aurata*):

Տարաշաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- Հոնենակերիա անցողուն՝ վտանգված տեսակ, աճում է Արագած լեռան լանջերին, Կող և Ուջան գյուղերի շրջակայքում, միջին լեռնային գոտու կավային քարքարոտ լանջերին:

- Ճարճատուկ խոզանավոր, կեղծափուշիկ մատնաձև, բոշխ սակավածաղիկ՝ կրիտիկական վիճակում գտնվող տեսակներ, աճելավայրը՝ Արագած լեռնագանգված, 3000-3900մ բարձրությունների վրա:

- Ոջլախոտ գարշահոտ՝ խոցելի տեսակ է, Կովկասի էնդեմիկ, աճելավայրը՝ Արագած լեռնագանգված, 2700-3600մ բարձրությունների վրա:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի է երկարաոտ սցինկ խոցելի տեսակը, որի ապրելավայրերից մեկը գտնվում է Կոշ գյուղի շրջակայքում:

Անհրաժեշտ է ևս մեկ անգամ նշել, որ այս տարածաշրջանը գտնվում է գյուղատնտեսական ակտիվ օգտագործման (վարելահող, բազմամյա տնկարկ) տարածքների շարքում, որտեղ գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 218,218.8հա է (կամ մարզի տարածքին շուրջ 79.2%), այդ թվում՝ վարելահողեր 54,105.7հա: Բնակավայրերի հողերը կազմում են մարզի հողերի շուրջ 6.3%, իսկ անտառային հողերը շուրջ 3.95%:

5.2 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Ծառա-թփային բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով, նախագծման ընթացքում ջրատարների ուղեգծերը ընտրվել են այնպես, որ նրանք չհատվեն ծառերի հետ:

5.3 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարերի կառուցման ընթացքում պայթեցման և ամենախնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ- մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանի-ներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

6.0 Համայնքների ֆունկցիոնալ գոտիավորում

Բնակլիմայական և սանիտարա-հիգիենիկ հատակագծային սահմանափակումների համակարգը /2/«Արագածոտն-10» համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծում սանիտարա-պաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերը ընդունված են համաձայն СНиП245-71 «Արդյունաբերական կազմակերպությունների նախագծման սանիտարական նորմաներ»:

- Էլեկտրաէներգիայանների ՍՊԳ-ի չափերը ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՄՆ և Կ II-12-77 «Պահպանություն աղմուկից» և ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» նորմերի և կանոնների, ԳՈՍՏ «Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմաներ և աղմուկային փորձարկումների մեթոդներ»: ՍՊԳ-ների չափը ընդունված է 20 մ:

- Գերեզմանների ՍՊԳ-ն ընդունված է համաձայն ՀՀ կառավարության նոյեմբերի 23-ի «Հողարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիտակիզարանների շահագործման մասին» 2006 թվականի N1910-ն որոշման հավելված 4-ի 7-րդ կետի:

- Էլեկտրահաղորդման գծերի (ԷՀԳ) պաշտպանական գոտիների չափերը ընդունված են համաձայն «Մինչև 1000Վ էլեկտրական ցանցերի պահպանման կանոններ»-ի հիման վրա՝

-35 կՎ -15 մ*

- 110 կՎ -20 մ*

- 6(10) կՎ - 10 մ*

* - գետնի վրա եզրային լարերի պրոեկցիայի հեռավորությունը:

3. Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերը ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված, համաձայն ՄՆ և Կ 2.05.06-85 «Մայրուղային խողովակաշարեր»:

4. Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերը ընդունված են համաձայն Մն և Կ 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»:

5. Գերեզմանատների համար ՍՊԳ-ն ընդունված է 300մ:

6. Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300մ: Աղբահավաք վայրերի քանակը՝ 40:

7. Կենսաբանական մաքրման կայանի ՍՊԳ-ն ընդունված է 300մ: ՄՆ և Կ 2.04.03-85 Կոյուղի: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ:

8. Օրգանական ծագման թափոնների վարակազերծման և թաղման վայրերի ՍՊԳ-ն ընդունված է 300մ:

7.0 Տարածքի բնական միջավայրի գնահատումն ըստ տեխնածին ազդեցության ընկալունակության

Տարածքի տնտեսական օգտագործման ռեժիմը զգալիորեն կախված է բնական միջավայրի ինքնամաքրման պոտենցիալից, որը ներառում է մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), ջրավազանների ինքնամաքրման պոտենցիալը (ՋԻՊ) և հողերի ինքնամաքրման պոտենցիալը (ՀԻՊ):

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), որը բնորոշում է դիտարկվող շրջանի մթնոլորտային օդի ինքնամաքրման ունակությունը կազմել է 0.7, որի դեպքում խառնուրդների ցրման պայմանները գնահատվում են որպես ոչ այնքան բարենպաստ:

«Արագածոտն-10» նախագծերում նշված համայնքները ներառում են Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքները: Նշված գետերի ինքնամաքրման ունակությունը գնահատվում է գետերի ջրի միջին տարեկան հոսքի և ինքնամաքրման պոտենցիալի ջերմաստիճանային ցուցանիշներից ելնելով:

Ջրային օբյեկտների ինքնամաքրման պոտենցիալը (ՋԻՊ) գնահատվում է ամռանը ջերմաստիճանային ռեժիմի անալիզի և ջրահոսքի հիդրոլոգիական բնութագրի հիման վրա: ՋԻՊ-ը գնահատվել է նշված գետերի համար: Գետերի ինքնամաքրման ջերմաստիճանային ցուցանիշի և գետերի ջրի <50մ³/վրկ բազմամյա միջին ծախսի դեպքում ՋԻՊ-ը գնահատվում է որպես ցածր:

Հողի ինքնամաքրման պոտենցիալը (ՀԻՊ) որոշվում է ըստ հողերի հիգիենիկ ակտիվության գործակցի, բուսական ծածկի տիպի և օրգանական նյութի քայքայման

արագության: Դիտարկվող տարածքի համար հողի ինքնամաքրման ունակությունը գնահատվում է որպես բարձր:

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ) բնորոշում է մթնոլորտում աղտոտող նյութերի կուտակման կամ ցրման գերակայությունը և որոշվել է ըստ հետևյալ բանաձևի՝

$$\text{ՄՕՊ} = P_{\text{ա}} + P_{\text{մ}} / P_{\text{տ}} + P_{\text{ք}}$$

$P_{\text{ա}}$ – քամու արագությունների կրկնողությունը (0-1,0մ/վրկ), %

$P_{\text{մ}}$ – մառախուղով օրերի կրկնողությունը, %

$P_{\text{տ}}$ – 0,5մմ տեղումներով օրերի կրկնողությունը, %

$P_{\text{ք}}$ – 6մ/վրկ և ավելի քամու արագությունների կրկնողությունը, %

Արժեքներն ընդունվում են համաձայն/3/:

$$P_{\text{ա}} = 8.2\%$$

$$P_{\text{մ}} = 2.7\%$$

$$P_{\text{տ}} = 10\%$$

$$P_{\text{ք}} = 5.5\%$$

$$\text{ՄՕՊ} = \frac{8.2 + 2.7}{10 + 5.5} = 0.7 < 1$$

ՄՕՊ-ի ստացված արժեքի դեպքում խառնուրդների ցրման համար պայմանները գնահատվում են որպես բարենպաստ, քանի որ մթնոլորտի ինքնամաքրմանը նպաստող գործընթացների կրկնելիությունը բարձր է, քան վնասակար նյութերի կուտակմանը նպաստող գործընթացների կրկնելիությունը:

Ջրային օբյեկտների ինքնամաքրման պոտենցիալը /ՋԻՊ/ որոշվում է ըստ ջրահոսքի ինքնամաքրման ջերմաստիճանային ցուցանիշի մեծության:

$$K = \frac{N}{365}$$

որտեղ N – տարվա ընթացքում 16° C և ավելի ջրի ջերմաստիճանով օրերի թիվն է:

$$N = 48$$

$$K = \frac{48}{365} = 0.13$$

Եթե $K = 0.1$ և ջրի միջին բազմամյա ծախսը <50 մ3/վրկ, ապա ՋԻՊ-ը գնահատվում է որպես ցածր, իսկ խառնուրդների նոսրացման համար պայմանները անբավարար:

Հողերի ինքնամաքրման պոտենցիալը /ՀԻՊ/ մեթոդիկային համապատասխան գնահատվել է ըստ տվյալ շրջանի համար բնորոշ բնական բուսական համակեցությունների տիպի և տվյալ տիպի համար բնորոշ թափված տերևների քայքայման ամենամյա ժամանակի:

Թափվածքներում ասիմիլացված էներգիան – 420.0 կալ-սմ2/տարի:

Տարվա ընթացքում թափվածքի քանակը – 62 գ/հա:

Թափվածքի էներգիայի հարաբերական քանակը – 11.9:

Վերգետնյա թափվածքը – 45.0 գ/հա տարվա ընթացքում:

Տապաստի պաշարը – 112.0 գ/հա տարվա ընթացքում:

Հողի մեջ օրգանական նյութերի քայքայման ժամանակը – 1.5 տարի:

Համաձայն մեթոդակարգի, եթե թափվածքի ասիմիլացված էներգիան մեծ է 300կալ-սմ²/տարի և նյութերի քայքայման ժամանակը (տարի) տարածվում է 0.5-2-ի սահմաններում, ապա հողերի ինքնամաքման պոտենցիալը գնահատվում է բարձր:

8. 0 Համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցությունը

«Արագածոտն-10» համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական կազմակերպությունների, բնակկոմունալ սեկտորի ջեռուցմանն ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոնների թվին են դասվում սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

8.1 Մթնոլորտային օդը

Ներկայումս համայնքների մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական կազմակերպությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Հիմնականում արդյունաբերական կազմակերպությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին, արտադրական արտանետումները աննշան են: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով համայնքներում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՄԹԿ):

«Արագածոտն-10» համայնքներում հանքարդյունաբերությունը հիմնականում զարգացած է Մելիքցյուղ համայնքում: Քննարկվող միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթի շրջանակներում հիմնականում աղտոտման աղբյուր է հանդիսանում Մելիքցյուղ համայնքի վարչական սահմաններում գտնվող Թուխմանուկի ոսկու հանքավայրը՝ ոսկու վերամշակման ֆաբրիկայով: Ներկայումս հանքավայրը չի շահագործվում: Սակայն հանքավայրի հետագա հնարավոր շահագործման դեպքում մթնոլորտային օդ արտանետումների հնարավոր քանակները կլինեն ստորև ներկայացված աղյուսակում՝

Ֆաբրիկայի հնարավոր վերազինման արդյունքում՝ առավելագույն 306000տ/տարի արտադրողականությունը դեպքում վնասակար նյութերի արտանետումների քանակները կկազմեն՝

Անօրգանական փոշի՝ 24,3տ/տարի, Քսանտոգենատ՝ 0.49տ/տարի, իսկ հանքավայրի շահագործման դեպքում՝ /համարժեք արտադրողականության դեպքում/ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակական և որակական ցանկը բերված է ստորև աղյուսակ՝

Աղյուսակ 3

N	Վնասակար նյութերի անվանումը	Վտանգավորության դասը	Ս.Թ.Կ մասը. մգ/մ ³	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի գումարային տարեկան քանակները, տ/տարի	
				մինչև 5-րդ տարի	6-րդ տարում
	2	3	4	5	6
	Փոշի	3	0,3	130.24	193.44
	Ածխածնի օքսիդ	4	5,0	6.31	9.89
	Ազոտի օքսիդներ	2	0,085	14.73	26.44
	Ածխաջրածիններ	2	1,5	2.91	4.39
	Մուր	3	0,15	0.33	0.91
	Ծծմբային անհիդրիդ	3	0,5	9.87	9.87
	Բենզ(ա)պիրեն	1	0,000001	$0.15 \cdot 10^{-3}$	$0.15 \cdot 10^{-3}$
Ընդամենը				164.39	244.94
Պայթեցման աշխատանքների ժամանակ առաջացող արտանետումները					
	Փոշի	3	0,3	23.94	40.05
	Ածխածնի օքսիդ	4	5	4.98	4.98
	Ազոտի օքսիդներ	2	0,085	2.74	2.74
Ընդամենը				31.66	47.77
Հանրագումար				196.05	292.71

Կազմակերպությունները հիմնականում պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին, արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Մթնոլորտ վնասակար արտանետումների տարեկան քանակներով ցանկը բերված է աղյուսակ 3-ում:

Ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի և փայտի ծախսից էլնելով և բերված են աղյուսակ 4-ում: Միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ընդունված է ջեռուցում -20% գազ, 80% փայտ և այլն:

Աղյուսակ 5 -ում բերված է նաև համայնքի ավտոտրանսպորտի արտանետումները:

Վնասակար արտանետումների հաշվարկները կատարվել են համաձայն գործող մեթոդակարգի /9-12/:

Վնասակար արտանետումները մթնոլորտ ջեռուցման ժամանակ
Աղյուսակ 4

Անվանումը	Վտանգ ավորությ ան դասը	Արտանետումները (վառելիք, գազ, փայտ) տ/տարի		
		20% գազ, 80% փայտ	2 համայնքներ 50% գազ, 50% փայտ	ընդամենը
1. Ածխածնի օքսիդ	4	4,70	38,89	43,59
2. Ազոտի օքսիդներ	2	3,69	11,44	15,13
3. Կախյալ մասնիկներ	3	4,62	30,22	34,84
4. Ծծմբային անհիդրիդ	3	0,28	1,8	2,08
Ընդամենը		13,57	82,35	95,92

Վնասակար արտանետումների քանակները ավտոտրանսպորտից՝
Աղյուսակ 5

Անվանումը	Վտանգավորո ւթյան դասը	Արտանետ ւմները մթնոլորտ տ/տարի
		2 համայնքներ (11 բնակավայր)
1. Ածխածնի օքսիդ	4	215,35
2. Ածխաջրածիններ	4	32,62
3. Ազոտի օքսիդներ	2	18,12
Ընդամենը		266,09

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները, ներդրման % և հասցված տնտեսական վնասները

Աղյուսակ 6

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, մլն. դրամ/տարի
1. Բնակարանների ջեռուցում	82,08/4,65	3,43
2. Ավտոտրանսպորտ	342,29/19,35	12,38
3. Արդյունաբերություն	292,71/76	13,85
Ընդամենը	717,08/100	29,66

Մթնոլորտ վնասակար արտանետումների մասին տեղեկությունները և տնտեսությանը հասցված վնասի արժեքները բերված են աղյուսակներ 6-ում /13/:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 717,08տ/տարի:

Համայնքներից մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 29,66մլն. դրամ տարի: Մթնոլորտ արտանետումների հիմնական ներդրումը՝ 76%, արդյունաբերությունն է:

8.2 Տարածքի համալիր գնահատականը

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը բերված է աղյուսակ 7-ում:

Օդային ավազանի գնահատականը անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը

Աղյուսակ 7

Անվանումը	Գնահատականը			Աղտոտման մակերեսը բնակելի գոտում, հա
	անտրոպոգեն ազդեցությամբ	հիգիենիկ իրավիճակով	տարածքի համալիր գնահատականը	
1	2	3	4	5
«Արագածոտն -10»	թույլ ազդեցության գոտի	Վտանգ չի հարուցում	բարենպաստ	16306.2

«Արագածոտն-10» համայնքների համար անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 16306.2հա: Հիգիենիկ իրավիճակով տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:





8.3 Մակերևութային ջրահոսքեր



Մարզի խոշոր գետերն են Քասախը և Գեղաձորը: Մարզի ջրային պաշարները գոյանում են Արագած լեռան ձնահալոցքից, տեղումներից եւ բնական աղբյուրներից: «Արագածոտն-10» ՄՄՀՏՊՓ տարածքում հիդրաբանական հիմնական տարրը Քասախ գետն է իր բազմաթիվ վտակներով, որոնք հոսում են Փամբակի լեռնաշղթայի և Արագածի հյուսիս-արևելյան բարձունքներից: Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի և այլ ջրամբարները:

Աղբյուրը՝ Հաշվետվություն ջրօգտագործման մասին: ՀՀ բնապահպանության նախարարություն, 2019թ.:


Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով: Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և վանադիումով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով: Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, կոբալտով, բորով և ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, ամոնիում, նիտրիտ և նիտրատ իոններով, մանգանով, երկաթով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և կախյալ նյութերով: Շաղկարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3 -րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով, երկաթով և ընդհանուր ֆոսֆորով: Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և նատրիումով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի գյուղ ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, թթվածնի քիմիական պահանջով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով: Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով: Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով և մանգան: Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և ալյումինով, Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:

Միջին տարեկան





**ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը / 2019 թվական**



Նշված համայնքների սահմաններում, գետերի ջրերի աղտոտվածության մակարդակը գնահատվում է՝

Ըստ սանիտարական ռեժիմի – բարձր,

Ըստ զգայարանական ցուցանիշների – արտակարգ բարձր,

Ըստ սանիտարա-թունաբանական ցուցանիշների - արտակարգ բարձր:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ գոյություն ունեցող պայմաններում նշված համայնքների սահմաններում բացառվում է ռեկրեակցիոն նպատակով գետերի օգտագործումը:

Հեռանկարում, բնակչության աճի հետ մեկտեղ կավելանա նաև գետեր թափվող տնտեսակենցաղային կեղտաջրերի քանակը, ինչը իր հերթին կհանգեցնի գետերի աղտոտվածության ավելացմանը: Անհրաժեշտ է նշված համայնքների համար կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

8.4 Աղմուկի մակարդակի գնահատում /16,17,18/

Գյուղական համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուղարձը ցածր է: Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

Համայնքների երկայնքով անցնող միջպետական ճանապարհով առավելագույն երթևեկությունը մոտ 300 մեքենա ժամում:

Ավտոմեքենաների մի կարգային հոսքի դեպքում, երթևեկության ինտենսիվությունից կախված աղմուկի մակարդակի որոշման նոմոգրամմաների համաձայն /նկ.20-23, 17/ աղմուկի միջին մակարդակը կազմում է 57-63 դԲԱ՝ փողոցի բանուկ մասի եզրից 7.5մ հեռավորության վրա:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ «Արագածոտն-10» համայնքներում ձայնի էկվիվալենտ մակարդակը 25մ հեռավորության վրա ճանապարհից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը կկազմի 43-50 դԲԱ, նորման 45-55 դԲԱ:

8.5 Հողերի բնութագիրը

«Արագածոտն-10» ՄՄՀՏՊ շրջանի հողերը պատկանում են լեռնա-մարգագետնա-տափաստանային հողերի տիպին: Այս հողատիպը Հայաստանում տարածված է հիմնականում ծովի մակարդակից 2000–2700մ բարձրությունների սահմաններում և զբաղեցնում է մոտավորապես 360հազ.հա մակերես: Լեռնա-մարգագետնա-տափաստանային հողերի տարածման գոտին բնութագրվում է ռելիեֆի հրաբխային ձևերով և համեմատած լեռնա-մարգագետնային գոտու հետ ավելի քիչ է կտրտված և քիչ են «չինգիլները»:

Արագածոտն-10 տարածական պլանավորման փաստաթղթի շրջանակներում ներառված են 16306.2հա հողեր, այդ թվում՝:

Գյուղատնտեսական հողեր- 13274.8հա

Բնակավայրեր- 720.22հա

Արդյունաբերական, ընդերքօգտագործման - 323.14հա

Էներգետիկայի և տրանսպորտի -41.6հա

Հատուկ պահպանման տարածքներ –93.17հա

Հատուկ նշանակության հողեր-693.35հա

Անտառային –1018.84հա

Ջրային –169.13հա

Պահուստային հողերը - բացակայում են

Նպատակային նշանակության հողերի բաշխումն ըստ համայնքների:

Համայնքների անվանում	Այլազյազ	Մելիքայուղ
Նպատակային նշանակության հողեր		
Գյուղատնտեսական	10937.08	2337.72
Բնակավայրերի	567.07	153.15
Արդյունաբերության	59.65	263.49
Էներգետիկայի	37.72	3.88
Հատուկ պահպանվող	90.19	2.98
Հատուկ նշանակության	693.35	-
Անտառային	856.44	162.4
Ջրային	100.23	68.9
Ամբողջը	13340.68	2965.52

Հողի հիմնական աղտոտումը կատարվում է ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային և արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտներից:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝

ավտոտրանսպորտի, արդյունաբերական կազմակերպությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները;

արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, գյուղի կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին:

Համայնքի տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերը աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային ցուցանիշը՝ $I_{\Sigma} < 16$), աղտոտվածության դասը–թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը բավարար:

9.0 Թափոնների կառավարում

*/Բաժինը մշակված է համապատասխան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն 21 հունիսի 2014 թ. ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի կետ9)-ի և SU 04 14.01.2021 Տեխնիկական առաջադրանքի պահանջների:

9.1 Աղբավայրեր

Հաճախակի են աղբի կուտակումը հենց բնակելի տների բակերում:

Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը:

Հիգիենիկ և համաճարակային տեսչության տարածքային կենտրոնի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

- Աղբահանումը կատարվում է անկանոն

- Հատկացված տարածքը, որը գտնվում է համայնքների վարչական սահմաններում, կենցաղային կոշտ թափոնների տեղափոխման, վնասազերծման, վերամշակման կազմակերպությունների և կառույցների հոդամասերի և դրանց սանիտարական պահպանման գոտիների չափերով չի համապատասխանում «Արդյունաբերական կազմակերպությունների նախագծման սանիտարական նորմեր» ՄՆ թիվ 245-71 և «Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» 2.07.01-81 ՄՆ և Կ պահանջներին: Տարածքները պարսպապատված չեն, անբարեկարգ են, չկան համապատասխան պայմաններ կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման և ախտահանման համար: Տարածքում կուտակված աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված են, ուստի այդ ժամանակավոր աղբավայրը ենթակա է կոնսերվացման:

Համայնքներում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը և տարեկան քանակը բերված է աղյուսակ 8-ում: Բնակչության թիվը կազմում է 6082 մարդ ըստ մարզպետարանի տվյալների:

Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 1216,4 տ/տարի:

ԿԿԹ-ի կազմը և տարեկան քանակը

Աղյուսակ 8

ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %	Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի
Աննդային թափոններ	21.3	259,09
Թուղթ	13.3	161,78
Փայտանյութ	6.9	72,98
Պլաստմասաներ	19.4	235,98
Ռետին և կաշի	2.0	24,33
Տեքստիլ	2.8	34,06
Ապակի	5.4	65,68
Երկաթ և նրա համաձուլվածքները, Գունավոր մետաղներ	1.9	23,11
Այլ թափոններ	27.0	328,42
ԸՆԴԱՄԵՆԸ	100	1216,4

9.2 Արդյունաբերական թափոններ

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջանակներում արդյունաբերական թափոններ կառաջանան միայն այն դեպքում, եթե վերագործարկվի Թուխմանուկի բացահանքի կենտրոնական տեղամասը:

Թուխմանուկի բացահանքի կենտրոնական տեղամասի շահագործման դեպքում կառաջանան հետևյալ թափոնները

Դատարկ ապարներ

Բացահանքի շահագործման առաջին 5 տարվա ընթացքում տարեկան առաջացող դատարկ ապարների առավելագույն ծավալը կկազմի 553.0հազ.մ³, իսկ շահագործման 6-րդ տարում՝ 925.3հազ.մ³: Դատարկ ապարները կուտակվում են լցակույտում:

Դատարկ ապարները պատկանում են ոչ վտանգավոր դասին, հրդեհապայթյունավտանգ չեն և ոչ լուծելի:

Բանեցված գործվածքի կորդով դողածածկաններ

Տարեկան առաջանում է 228 լրակազմ բանեցված անվադողեր, որոնք պատկանում են վտանգավորության 4 դասին՝ ծածկագիր 57500203 13 00 4 [11]:

Տարեկան առաջանում է 228 հատ կամ մոտ 26.6տ թափոն:

Բանեցված գործվածքի կորդով դողածածկանները հրդեհապայթյունավտանգ հատկություններ չունեն, քիմիապես իներտ են և չունեն կոռոզիոն հատկություններ:

Բանեցված դողածածկանները բնական միջավայրում քայքայվում են մոտ 100 տարում: Դողածածկանների շփումը անձրևաջրերի և գրունտային ջրերի հետ առաջացնում է որոշ տոքսիկ օրգանական նյութերի (դիբուտիլֆտալատ, ֆենատրապեն և այլն) լվացում, որոնք ընկնելով շրջակա միջավայր բացասական ազդեցություն են թողնում հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա

Բանեցված գործվածքի կորդով դողածածկանները կուտակվում են հարստացուցիչ ֆաբրիկայի տարածքում հատուկ առանձնացված պինդ հատակ և ծածկ ունեցող հարթակի վրա, հետագայում համապատասխան վերամշակող կազմակերպություններին վաճառելու (տրամադրելու) նպատակով:

Մետաղաջարդոն

Բացահանքի շահագործման արդյունքում լեռնային տեխնիկայի, հորատման սարքավորումների, նրանց հանգույցների մաշվածության, ջարդման պատճառով առաջանում է սև մետաղի ջարդոն : Տարեկան առաջանում է 6.5 տ թափոն :

Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոնները (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի), ըստ N 430-Ն հրամանին կից ցանկի, պատկանում են վտանգավորության 4 դասին՝ ծածկագիր 35131100 01 00 4: Չնայած որ համաձայն նույն ցանկին, այս ծածկագրի տակ նշված սև մետաղի թափոնները վերաբերվում են մետաղամշակման, գլոցվածքի արտադրությանը և սպառմանը :

Սև մետաղների ջարդոնը կկուտակվի հարստացուցիչ ֆաբրիկայի արդիւրապարակում, այդ նպատակով հատուկ հատկացված հարթակում և պարբերաբար կտեղափոխվի վերամշակման գործարաններ :

Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան

Տեխնոլոգիական և օժանդակ, բեռնատար և հատուկ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում բացահանքում տարեկան գոյանում է 360կգ (6 հատ) շահագործման ժամկետը անց բանեցված կապարե կուտակիչներ և խոտան: Այդ թափոնները պատկանում են վտանգավորության 2 դասին, ծածկագիր՝ 92110100 13 01 2:

Թափոնի կազմը՝

Պլաստմասե (պոլիպրոպիլեն) իրան՝ 10%,

Կապարե թիթեղներ՝ 70-75%,

Էլեկտրոլիտ (ծծմբական թթվի 25% լուծույթ)՝ 15-20%

Պլաստմասե իրան՝ ֆիզիոլոգիական տեսակետից համարյա անվնաս է: Իրանի քայքայումից կամ այրումից կարող են առաջանալ ֆտալատներ: Ընկնելով մարդու օրգանիզմ, ֆտալատների միայն աննշան մասն է ներծծվում մարսողական համակարգով: Ֆտալատները կարող են նաև չնչին չափով գրգռել մաշկը և լորձաթաղանթը: Բույսերի վրա ֆտալատների ազդեցության ժամանակ կարող են առաջանալ քլորոզներ:

Կապարե թիթեղներ՝ կապարը կուտակվում է օրգանիզմում, առաջացնելով խրոնիկ թունավորում, ազդում է ներվայն համակարգի, տարբեր օրգանների և արյան վրա:

Էլեկտրոլիտ (ծծմբական թթու)՝ առաջացնում է մաշկի այրվածքներ, շնչուղիների և լորձաթաղանթների գրգռվածություն: Ծծմբական թթվի գոլորշիները շնչելու ժամանակ դժվարանում է շնչառությունը, առաջանում է հագ, երբեմն՝ լարինգիտ, տրախեիտ, բրոնխիտ և այլ հիվանդություններ:

Բանեցված կապարե կուտակիչները հրդեհապայթյունավտանգ հատկություններ չունեն, սակայն կուտակիչներում պարունակվող էլեկտրոլիտը (ծծմբական թթվի 25% լուծույթ) օժտված է կոռոզիոն ակտիվությամբ և թափվելու դեպքում կարող է առաջացնել տարբեր մետաղական և ոչ մետաղական իրերի քայքայում:

- Տարածքը, որտեղ պահվում են բանեցված կուտակիչները, պետք է ունենա օդափոխության համակարգ;

- Բանեցված կուտակիչները պետք է դրվեն հատուկ տակդիրների վրա, որոնք կբացառեն էլեկտրոլիտի թափվելը, տակդիրի եզրերը պետք է ունենան 5սմ-ից ոչ պակաս բարձրություն;

- Հատակը պետք է պատրաստված լինի քիմիական ազդեցությունների նկատմամբ կայուն նյութից և բացառի թափված էլեկտրոլիտի ներծծումը հողային շերտ:

Տարածքը, որտեղ պահվում են կուտակիչների թափոնները, պետք է հեռացված լինի վարչակենցաղային շինություններից:

Բանեցված դիզելային յուղեր

Շարժիչներում աշխատած և իր հատկությունները կորցրած բանեցված դիզելային յուղերը պատկանում են վտանգավորության 3 դասին՝ կոդ 54100203 02 03 3:

Բացահանքում բանեցված յուղերի քանակը տարեկան կազմում է 48.6տ :

Յուղերի կազմը.

Յուղ՝ 78%

Քայքայման արժանիքներ՝ 8%

Ջուր՝ 4%

Մեխանիկական խառնուրդներ՝ 3%

Հավելանյութեր՝ 1%

Վառելանյութ՝ մինչև 6%

Ընդհանուր առմամբ դիզելային յուղերը, հանդիսանալով նավթավերամշակման արդյունք և հիմնականում կազմված լինելով տարբեր բարձրա- և ցածրամոլեկուլային ածխաջրածինների խառնուրդից, վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար: Թափանցելով շրջակա միջավայր, բանեցված դիզելային յուղերի մի փոքր մասն է ենթարկվում քայքայման և հեռացվում բնական պրոցեսների արդյունքում: Իսկ նրանց հիմնական մասը հանդիսանում է հողի, ստորերևային և մակերևութային ջրերի ու մթնոլորտի աղտոտիչ: Բանեցված դիզելային յուղով հողի աղտոտման ժամանակ հողային ֆաունայի և ֆլորայի համար ստեղծվում են նոր էկոլոգիական պայմաններ: Նավթամթերքներով աղտոտված հողերում տեղի է ունենում պեդոբիոտների տեսակային և էկոլոգիական բազմազանության կրճատում, ավտոտրոֆ ասիմիլյացիայի վատացում, հողային կենդանիների ֆունկցիոնալ ակտիվության և հողի ֆերմենտային ակտիվության անկում: Նավթամթերքի հոսքը դեպի հողի մակերես և ներթափանցումը ներքին շերտեր առաջին հերթին խախտում է հողի ջրաօդային հավասարակշռությունը: Դրա արդյունքում առաջանում է հողի դեֆլյացիա, հարթ և գծային էրոզիա: Դա էլ իր հերթին բերում է բուսականության աղքատացմանը և հողի կենսաարտադրողականության անկմանը:

Բանեցված դիզելային յուղերն օժտված են հրդեհավտանգ հատկություններով, չունեն կոռոզիոն ակտիվություն:

Բանեցված դիզելային յուղերը հավաքվում են մետաղյա տակաոներում, պահվում են հատուկ առանձնացված տարածքում և կրկնակի (երկրորդային) օգտագործվում են հիդրավլիկ համակարգերում:

Բանեցված դիզելային յուղով տարաները պետք է դրված լինեն մետաղական տակդիրների վրա: Տակդիրը նախատեսված է վերաթափումների, արտահոսքերի հավաքման համար և պետք է ունենա որոշակի ծավալ՝ ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ը:

Հատակը պետք է պատրաստված լինի անջրաթափանց և անյուղաթափանց նյութից և ունենա դրենաժային համակարգ:

Հեղեղային ջրերի պարզեցման ավազանի նստվածք

Բացահանքի տարածք թափվող մթնոլորտային ջրերը ուղղվում են պարզարան, որտեղ կախույթը նստում է հատակին: Տարեկան առաջանում է 9.66տ նստվածք:

Պարզարանի նստվածքը իր կազմով հանապատասխանում է դատարկ ապարներին:

Նստվածքը տեղափոխվում է “Մեզո Գոլդ” ՍՊԸ գործող պոչամբար, իսկ պարզվածքը օգտագործվում է փոշենստեցման նպատակով:

Կենցաղային աղբ

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, պլաստմասը և այլն:

Թափոնների առաջացման նորման 0,15մ³/տարի 1 մարդու համար (դաշտային պայմաններում): Տեսակարար կշիռը՝ 0,25 տ/մ³: Քանակը՝ 2.5 տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 91200400 01 00 4:

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ, որտեղից ել պարբերաբար տեղափոխվում են հատուկ պոլիգոններ, որոնց տեղանքը համաձայնեցված է տեղական կառավարման մարմինների հետ:

Ընկերության գործունեության արդյունքում առաջացող թափոնների ցանկը և քանակները բերված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

Անվանումը	Վտանգա-վորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Չափման միավորը	Քանակը կամ ծավալը
Բանեցված կապարե կուտակիչներ կամ խոտան	II	92110100 13 01 2	տ/տարի	0.36
Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	III	54100201 02 03 3	տ/տարի	48.6
Բանեցված գորվածքի կորդով դողածածկեր	IV	57500202 13 00 4	տ/տարի	26.6
Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոնները	IV	35131100 01 00 4	տ/տարի	6.5
Անձրևաջրերի պարզարանի նստվածք	-	-	տ/տարի	9.66
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	91200400 01 00 4	տ/տարի	2.5

Առաջացող թափոնները բացահանքի տարածքում չեն կուտակվում, պահեստավորվում են հարստացուցիչ ֆաբրիկայի արդիրապարակում՝ այդ նպատակների համար հատկացված հարթակների վրա:

Թուխմանուկի հանքավայրի հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինման արդյունքում առաջանում է միջանկյալ գրավիտացիոն պոչերի հետագա արդյունավետ մշակման հնարավորություն՝ ոսկու կորզման ընդհանուր աստիճանը բարձրացնելու նպատակով:

Նախատեսվում է կառուցել միջանկյալ չոր պոչերի պահեստ, որը թույլ կտա տեղափոխել եւ լրամշակել գոյություն ունեցող գրավիտացիոն պոչանքը, այն ըստ հաստատված նախագծի լրամշակելու նպատակով:

Ըստ նախնական հաշվարկների չոր պահեստավորման ծավալը կկազմի մոտ 78000 խմ, իսկ չոր պահեստավորման համար անհրաժեշտ մակերեսը 2.0 հա:

Թուխմանուկի ֆաբրիկայի շահագործման դեպքում կառաջանան արտադրական մնացորդներ և կենցաղային բնույթի թափոններ:

Արտադրական թափոններ

Հանքաքարի վերամշակման արդյունքում ստացվում են «չոր» պոչանքներ, որոնք տեղակայվում են անմիջապես ֆաբրիկայի տարածքում: Չոր պոչանքները չեն դասվում թափոնների շարքին, քանի որ տեխնոլոգիաների հետագա զարգացման արդյունքում դրանք կարող են օգտագործվել ավելի խորը կորզման նպատակով:

Կենցաղային աղբ

Թափոնը կուտակվում է աղբամաններում և ըստ համապատասխան պայմանագրի տեղափոխվում են մոտակա՝ համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Քանակը՝ 6.4 տ/տարի:

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի շրջանակներում առկա արդյունաբերական բոլոր կազմակերպությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են սանեպիդկայանի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային կազմակերպություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

9.3 Օրգանական ծագման թափոններ

Սրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

N 1 կարգ - մարդու անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):

N 4 կարգ - Առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):

N 6 կարգ - Օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):

Դասվում են վտանգավորության 3-րդ դասին: Ծածկագիրն է՝ 9700100 01 05 3:

Այս թափոնների հնարավոր վարակազերծումը համարվում է քիմիական վնասազերծումը սպիրտի և ֆորմալինի լուծույթով և խորը թաղումը գերեզմանատանը հատկացված տարածքում:

Թափոնները առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում:

Թափոնները դասակարգվում են հետևյալ կերպ՝

Ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների $\approx 90\%$ -ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, կարտոն, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 0.65տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀԿ-ի կողմից հատկացված աղբավայր: Դասվում են վտանգավորության 4-րդ դասին: Ծածկագիրն է՝ 91200400 01 00 4:

Բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է ~ 17 կգ/օր:

10.0 Կանաչապատման համակարգը

*/Բաժինը մշակված է համապատասխան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն 21 հունիսի 2014 թ. ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի կետ 5)-ի և ՏԱ 04 14.01.2021 Տեխնիկական առաջադրանքի պահանջների:

«Արագածոտն-10» տարածքը, ինչպես նշված է համապատասխան բաժիններում, գտնվում է կիսաանապատային լանդշաֆտային գոտում, խիստ մայրցամաքային կլիմայով, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով: Այս ամենը չափորոշիչ է բնակավայրերի կանաչապատման համակարգի ձևավորման և պահպանման համար:

Գյուղական բնակավայրերում կանաչապատման հիմնական մասը ընկնում է սահմանափակ օգտագործման կանաչի բաժնին, որը տեղակայված է տնամերձ հողամասերում և կազմում է հողամասի շուրջ 40%: «Արագածոտն-10»-ում գյուղական բնակավայրերում տնամերձ հողամասերում կանաչապատ տարածքի գումարը կազմում է շուրջ 124.01 հա: «Արագածոտն-10» բնակչության թիվը կազմում է 6.082 հազ.մարդ: Մեկ բնակչին հասնող կանաչ տարածքի բաժինը կազմում է 49.04քառ.մ/մարդ:

Մասամբ կանաչապատված են նաև հասարակական տարբեր նշանակության կազմակերպությունների հողատարածքները: Հասարակական կառուցապատման կանաչապատ տարածքի գումարը կազմում է շուրջ 1.97 հա: Մեկ բնակչին հասնող կանաչ տարածքի բաժինը կազմում է 3.24քառ.մ/մարդ:

Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները՝ պուրակներն ու զբոսայգիները ներկայացված են խիստ սահմանափակ հատվածներով, քանի որ գյուղերում գրեթե բացակայում են զբոսայգիներն ու պուրակները: «Արագածոտն-10»-ի գյուղերում ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների գումարը առավելագույն չափը կկազմի 3.4հա: Մեկ բնակչին հասնող կանաչ տարածքի բաժինը կազմում է 5.59քառ.մ/մարդ:

11. 0 Շրջակա միջավայրի գոյություն ունեցող իրավիճակի գնահատականը

Միջավայրի համալիր անտրոպո-տեխնածին բեռնվածությունը բաղկացած է գործոնային ցուցանիշներից, միջավայրի հիմնական գործոնների քանակական

բնութագրից, որոնք որոշիչ են մարդու օրգանիզմի վրա իրական բեռնվածությունում՝ մթնոլորտային օդի և հողերի, աղմուկի մակարդակների, ջրի քիմիական և կենսաբանական աղտոտվածության ցուցանիշներ:

Որոշվող համալիր բեռնվածությունը օրգանիզմի վրա (KH) բաղկացած է հաշվի առնվող նշված գործոնների (տվյալ պայմաններում գոյություն ունեցող) գումարից:

Հաշվի առնվող նշված գործոններից յուրաքանչյուրը քանակապես որոշվում է հիգիենիկ նորմատիվներին վերաբերվող մեկ ցուցանիշներով:

Նշված դեպքում թույլատրելի համարվում է այն մեծությունը, որը հավասար է 1-ի:

11.1 Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարա-հիգիենիկ իրավիճակի անալիզը

Համաձայն Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի ՀՀ-ի տարածքում 2019թ. Մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին Ամփոփագրի տվյալների ողջ մարզում մոնիթորինգի դիտակետեր չկան:

Գյուղական համայնքների տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ^3), վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի կողմից և բերված են աղյուսակ 10-ում:

Հաշվարկների համար վերցված է ֆոնային աղտոտվածությունը /19/: Գյուղական համայնքներում ֆոնային աղտոտվածությունը չի գերազանցում սահմանված նորմերը, քանի որ գյուղական համայնքներում բնակչության թիվը չի գերազանցում տասը հազարը:

Աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները

Աղյուսակ 10

Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՄԹԿ, մգ/մ^3	Ֆոնային կոնցենտրացիաները	
		մգ/մ^3	միավոր ՄԹԿ
002 Փոշի	0.2	0.3	0.6
701 Ծծմբի երկօքսիդ	0.5	0.05	0.1
200 Ազոտի օքսիդներ	0.2	0.015	0.075
322 Ածխածնի օքսիդ	5.0	0.8	0.16

Ինչպես երևում է աղյուսակից համայնքներում ֆոնային կոնցենտրացիաները չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

11.2 Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը

Մթնոլորտային օդի աղտոտվածության հետ կապված բնակչության առողջության պայմանական ռիսկը որոշվում է՝

$R = V \cdot K \cdot M \cdot B \cdot C \cdot 10^{-3}$ բանաձևով, որտեղ

R – ռիսկի չափը

V – մեկ մարդու կողմից ներծծված օդի քանակն է օրվա ընթացքում – 28.8 մ^3 :

M – մարդու զանգվածն է կգ-70

K – մարդու օրգանիզմով տվյալ նյութի կլանման •ործակիցն է (0,75±0,25)

B – ռիսկի կոնցենտրացիայի շեղման գործակից – 1,0 ±10⁻³ (օր/մգ տվյալ նյութի համար)

C – տվյալ աղտոտող նյութի միջին տարեկան կոնցենտրացիան է օդում

$$R_{NO_2} = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.015 \cdot 10^{-3} = 0.00227 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

$$R_{SO_2} = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.005 \cdot 10^{-3} = 0.00756 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

$$RCO = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.08 \cdot 10^{-3} = 0.12 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

$$R_{\text{փոշի}} = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.03 \cdot 10^{-3} = 0.045 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

Այստեղից արվում է եզրակացություն, որ մթնոլորտ փոշու և ածխածնի օքսիդի արտանետումների նվազեցման համար անհրաժեշտ չէ կիրառել լրացուցիչ միջոցառումներ:

11.3 Գյուղական համայնքների հողերի աղտոտվածության մակարդակի գնահատումը

Հողերի հետազոտությունն իրականացվել է հետևյալ նպատակների համար.

- շինարարական հրապարակի՝ պակաս արժեքավոր հողերի վրա տեղադրման ընտրության, օրգանական, ռադիոակտիվ, թունավոր քիմիական թափոններով աղտոտված հողերի վրա շենքերի և շինությունների տեղադրման կանխարգելման,
- Հողի աղտոտվածության գնահատման, ինչպես բնակչության առողջության վրա ազդող գործոն,
- բնակելի թաղամասի կանաչապատման և ռեկրեացիոն գոտիների ստեղծման սխեմաների մշակման:

Համայնքների տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով և նոր շենքերի և շինությունների տեղադրման ընտրությունը սահմանափակված չէ:

12. 0 Շրջակա միջավայրի վրա անտրոպատեխնածին բեռնվածության համալիր ցուցանիշները

Շրջակա միջավայրի վրա անտրոպատեխնածին բեռնվածության համալիր ցուցանիշը՝ KH, որոշվում է

$$KH = (K_{\text{օդ}} + K_{\text{աղմուկ}} + K_{\text{ջուր}} + K_{\text{հող}}) : N, \text{ որտեղ}$$

N – հաշվի առնվող գործոնների քանակն է N=4

Ցուցանիշի նորմատիվային մեծությունը համարվում է հաշվի առնվող գործոնային գնահատականների համապատասխան միավորների թիվը, տվյալ դեպքում՝ 4:

Էկոլոգո-հիգիենիկ իրավիճակի գնահատականը տարածքի շրջակա միջավայրի անտրոպատեխնածին աղտոտվածության հետևանքով կատարվել է հիգիենիկ դասակարգման արդյունքների հիման վրա (KH) և բերված է ստորև աղյուսակ 11-ում:

Բնակելի կառուցապատման տարածքներում Էկոլոգո-հիգիենիկ իրավիճակի լարվածության աստիճանի չափանիշը

Աղյուսակ 11

Մանիտար ա- հիգիենիկ իրավիճակի լարվածության աստիճանը	Էկոլոգիական անհարմարավետության աստիճանը	Հիգիենիկ ռանգավորման մեծությունը ^ա KH	Շրջակա միջավայրի բնութագիրը	Մարդկանց առողջական վիճակի բնութագիրը: Բնակչության պոտենցիալ կենսագործունեության ինդեքսը (ՊԿԻ)
1.Գյուղական համայնքների տարածքներ համեմատ բավարար	Համեմատաբար բավարար	KH = 3.12 – 3.5 սովորաբար ցածր է հաշվի առնվող գործոններց 0.78 անգամ, սակայն տարվա ընթացքում 98 օր դիտարկվում է աղտոտված ության թերթևակի բարձրացում	Հիգիենիկ նորմատիվների գերազանցում մի շարք միջավայրերում (ջուր, աղմուկ) Յուրաքանչյուր միջավայրում ՍԹԿ-ի եզակի գերազանցում	Առողջության ընդհանուր ցուցանիշները չեն գերազանցում սովորական հետազոտված ցուցանիշները, և կախված չեն Էկոլոգիական անհարմարավետության թյունից Առողջության ցուցանիշը մինչև 1 ՊԿԻ ≤ 1

13.0 Համայնքների զարգացման հիմնական ուղղությունները

«Արագածոտն-10» միկրոռեգիոնալ տարածքի բնակավայրերում հեռանկարային զարգացման համար հիմնական խթանիչ գործոն են հանդիսանում գործող հզորությունների տեխնոլոգիական գործընթացի արդիականացումը, շրջակա միջավայրի վնասակարության աստիճանի նվազեցումը և էներգախնայող սարքավորանքի կիրառումը:

Նոր ներդրումային հնարավորությունների առաջացման դեպքում առանձնահատուկ նշանակություն ունի դրանց հանրային օգտակարության և տնտեսավետության, շրջակա միջավայրի պահպանության և էներգախնայողության արմատական հիմնավորումների կատարումը:

Համայնքի և գյուղերի գոյատևման, առաջընթացի ապահովման և զարգացման հիմնական գործոնը գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով

ապահովվածությունն է: Դրա հետ մեկտեղ համայնքում գյուղատնտեսական արտադրամիջոցներով ապահովությունն է, տեխնիկական զինվածությունը: Չարգացման ուղղվածությունը ագրոմշակույթի մակարդակի բարձրացումն է, որոգման ջրի խնայողաբար, արդյունավետ և համաչափ օգտագործումը, մշակաբույսերի պաշտպանությունը ցրտահարություններից և կարկտահարումից, գյուղական տնտեսական միավորների խոշորացումը, ներուժի խելամիտ օգտագործումը, միասնական ներդրումների և արդյունքների հասնելու պատրաստակամությունը:

Հիմնվելով ներկա իրավիճակի և նախորդ ժամանակաշրջանների ուսումնասիրության ու վերլուծության եզրահանգման վրա հիմնվելով պետք է գերծ մնալ անիրատեսական զարգացման ծրագրերի առաջադրումից՝ բնակչության թվի կտրուկ աճի, տնտեսական, այդ թվում հանքարդյունահանման ոլորտների, ինժեներական ենթակառուցվածքների կտրուկ ծավալային զարգացման և այլն: Հիմնական ուղղությունները պետք է նպատակաուղղվեն գոյություն ունեցող հզորությունների կատարելագործմանը և բարեփոխմանը, ինչի շնորհիվ կարող են նոր հիմքեր ստեղծվել հեռանկարային զարգացման տեմպերի արագացման համար:

Հետևողական և շարունակական աշխատանք տանել բնակավայրերի տարածքների մաքրության պահպանման ուղղությամբ, ստեղծել աղբի և թափոնների հավաքման, կուտակման, տեսակավորման, օգտագործման և վնասագերծման արդյունավետ համակարգ և համապատասխան տեխնիկական հզորություններ:

Բնակչության շրջանում լայն քարոզչական աշխատանք տանելով, զարգացման հիմքում ընդունել «կանաչ» և «խելամիտ» բնակավայրերի ձևավորման պայմանները:

Համայնքում բնակչության հանրային կյանքի և ստեղծարար մթնոլորտի ձևավորման նպատակով խրախուսել և ակտիվացնել հին ու նոր ավանդույթները, տեղական, տարածաշրջանային, ժողովրդագրական, կրոնական և պետական տոնական միջոցառումները, մարտական հերոսների և համայնքի հասարակական կյանքում անձնական ներդրում ունեցող անձանց խրախուսման և հիշատակման արարողությունների անցկացումը:

14. 0 Տարածքի տնտեսության հեռանկարային զարգացումը

«Արագածոտն-10» տարածական պլանավորման նախագիծը ընդգրկում է Ալազյազ և Մելիքգյուղ համայնքները՝

Ալազյազ համայնքի ընդհանուր մակերեսը՝ 13340.68 հա տարածք, այդ թվում՝

գյուղատնտեսական նշանակության - 10932.94 հա

բնակավայրերի- 584.76 հա

արդյունաբերական, ընդերքօգտագործման - 44.93հա

էներգետիկայի, տրանսպորտի, կապի- 37.84հա

հատուկ պահպանվող տարածքներ - 90.19հա

անտառային- 856.44հա

ջրային- 100.23հա

հատուկ նշանակության -693.35հա

պահուստային - բացակայում են:

Մելիքգյուղ համայնքի ընդհանուր մակերեսը՝ 2965.90 հա տարածք, այդ թվում՝

գյուղատնտեսական նշանակության - 2337.72հա

բնակավայրերի- 153.77հա

արդյունաբերական, ընդերքօգտագործման - 235.87հա

էներգետիկայի, տրանսպորտի, կապի- 3.88հա

հատուկ պահպանվող տարածքներ - 2.98հա

անտառային- 162.4հա

ջրային- 68.90հա

հատուկ նշանակության –բացակայում են

պահուստային - բացակայում են:

Տարածքային պլանավորման նախագծով հողերի նպատակային նշանակության հողատեսքի, գործառական նշանակության և զբաղեցրած տարածքների փոփոխություն չի սպասվում:

Նախատեսված է բնակչության աճ-10%-ի չափով: Բնակչության թիվը կկազմի 93500 մարդ: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են այգեգործությունը, գինու և կոնյակի արտադրությունը, սննդի արդյունաբերությունը, առևտուրը, խաղողագործությունը, ձկնաբուծությունը, մեղվաբուծությունը, անասնապահությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը:

ԱՐԱԳԱԾՈՏՆ 10, ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (Ձև 3)				
Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափի միավորը	Ելակետային	Առաջնահերթ	Հեռանկարային
2	3	4	5	6
Տարածքը (ընդամենը),այդ թվում՝	հազ. հա	16306,20	16306,20	16306,20
գյուղատնտեսական նշանակության հողեր (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողատեսքեր)	հազ. հա	13274,80	13272,86	13270,66
բնակավայրերի հողեր	հազ. հա	720,17	732,29	738,53
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	հազ. հա	295,14	284,84	280,80
էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	հազ. հա	41,6	41,72	41,72
հատուկ պահպանվող տարածքների հողեր	հազ. հա	93,17	93,17	93,17
հատուկ նշանակության հողեր	հազ. հա	693,35	693,35	693,35
անտառային հողեր	հազ. հա	1018,84	1018,84	1018,84
ջրային հողեր	հազ. հա	169,13	169,13	169,13

պահուստային հոդեր	հազ. հա	0	0	0
-------------------	---------	---	---	---

15.0 Համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնաձին ազդեցությունը

Գյուղական համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնաձին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական կազմակերպությունների, բնակկոմունալ սեկտորի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքի շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոնների թվին են դասվում սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

15.1 Մթնոլորտային օդը

Հեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական կազմակերպությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումները: Արդյունաբերական կազմակերպությունները հիմնականում պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Ներկայումս համայնքներում ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թյուլատրելի կոնցենտրացիաներից (ՄԹԿ):

Հեռանկարում նախատեսված է բոլոր կազմակերպությունների համար 5-10% արտադրականության աճ: Կազմակերպություններից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակները բերված են աղյուսակ 12-ում:

Ընդամենը արդյունաբերական արտանետումները կազմում են 19,646տ/տարի:

Ջեռուցման ժամանակվնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի ծախսից ելնելով և բերված են աղյուսակ 13-ում: Ընդունված է, որ հեռանկարում ջեռուցումը միայն գազով:

Ավտոտրանսպորտի արտանետումները մթնոլորտ բերված են աղյուսակ 14:

Վնասակար արտանետումների հաշվարկները կատարվել են համաձայն մեթոդակարգի /9-12/:

Վնասակար արտանետումները մթնոլորտ արդյունաբերական կազմակերպություններից

Աղյուսակ 12

Վնասակար արտանետումներ	Վտանգավորության դասը	Արտանետումները, տ/տարի
1. Ածխածնի օքսիդ	4	11
2. Ազոտի օքսիդներ	2	4,45
3. Անօրգանական փոշի	3	2,75
4. Փայտափոշի	3	0,3
5. Մանգանի օքսիդներ	2	0,0025
6. Երկաթի օքսիդներ	3	0.019
7. Ավազի փոշի	3	0,43
8. Ցեմենտի փոշի	3	0.063
9. Քաղցախաթթու	3	0,31
10. Օրգանական փոշի	-	0,073
11. Մեթան	-	0.18
12. Էթիլմերկապտան	-	0.000038
13. Մոնոէտանոլամին	-	0.068
Ընդամենը		19,646

Վնասակար արտանետումները մթնոլորտ ջեոուցման ժամանակ
Աղյուսակ 13

Անվանումը	Վտանգավորության դասը	Արտանետումները (վառելիք, գազ, փայտ) տ/տարի
		2 համայնքներ 100% գազ
1. Ածխածնի օքսիդ	4	24,27
2. Ազոտի օքսիդներ	2	10,8
Ընդամենը		35,07

Վնասակար արտանետումների քանակները ավտոտրանսպորտից
Աղյուսակ 14

Անվանումը	Վտանգավորության դասը	Արտանետումները մթնոլորտ տ/տարի
		2 համայնքներ
1. Ածխածնի օքսիդ	4	237,32

2. Ածխաջրածիններ	4	35,88
3. Ազոտի օքսիդներ	2	19,94
Ընդամենը		293,14

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները, ներդրման % և հասցված տնտեսական վնասները

Աղյուսակ 15

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, մլն. դրամ/տարի
1. Բնակարանների ջեռուցում	18,37/1,1	0,49
2. Ավտոտրանսպորտ	376,51/22,75	13,62
3. Արդյունաբերություն	19,57/1,15	0,93
Ընդամենը	414,45/25,0	15,04

Բոլոր մթնոլորտ վնասակար արտանետումների քանակները, տնտեսությանը հասցված վնասի արժեքները և ներդրման % և տնտեսությանը հասցված վնասը բերված են աղյուսակ 15:

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 91%-ը:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 414,45տ/տարի:

Մթնոլորտ վնասակար արտանետումներից «Արագածոտն-10» համայնքներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 15,04մլն. դրամ տարի:

15. 2 Տարածքի համալիր գնահատականը

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը:

Աղյուսակ 16

Անվանումը	Գնահատականը	Աղտոտման մակերեսը
-----------	-------------	-------------------

	Անտրոպոգեն ազդեցությամբ	Հիգիենիկ իրավիճակով	Տարածքի համալիր գնահատական ը	բնակելի գոտում, հա
տարածք «Արագածոտ ն-10»	թույլ ազդեցության գոտի	վտանգ չի հարուցում	բարենպաստ	16306,58

Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 16306,58հա: Ըստ հիգիենիկ գնահատականի տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

16.0 Մակերևութային ջրահոսքեր

Նշված համայնքները գտնվում են Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում:

Գետերի մեջ նշված համայնքների տարածքում թափվում են տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը:

Համայնքների աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս «Արագածոտն-10» տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի ընտրություն, ուստի հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների համար հոսքաջրերի մաքրման հարցը կլուծվի լոկալ կենսաբանական մաքրման կայանների տեղադրմամբ, իսկ գյուղական բնակավայրերի համար դեռևս կիրականացվի գոյություն ունեցող անջրթափանց հորերի միջոցով:

Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար գյուղական համայնքներում, նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան: Մաքրման կայանը ունի բազմաստիճանային մաքրման կառուցվածք և ներառում է սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, կենսազտիչ առաջին և երկրորդ աստիճանի օդավորման ավազան (աերոտենկ), երկու պարզարան, պոմպային հատվածամաս: Մաքրման արդյունավետությունը 98%:

Կայանի կորպուսը կարող է պատրաստված լինել պողպատից կամ պոլիպրոպիլենից:

Նստվածքի հեռացումը կատարվում է երկու տարին մեկ անգամ: Նստվածքը կարող է օգտագործվել որպես պարարտանյութ: Հնարավոր է մաքրման կայանը փոխարինել ուրիշ նույն մաքրման աստիճան ունեցող ինքնավար կենսաբանական մաքրման կայանով:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ ծրագրով նախատեսված մաքրման կայանների առկայությունը կկանխարգելի նշված գետերի հետագա աղտոտումը:

16.1 Հեղեղատար կոյուղի

«Արագածոտն-10»-ի տարածքում հեղեղատար կոյուղին հեղեղումներից պաշտպանության ինժեներական միջոցներից մեկն է: Հեղեղատար կոյուղու ստեղծումը նպատակ ունի անձրևի և ձյան հալոցքի ընթացքում տարածքի հատվածները, հողամասերը, շենքերի և շինությունների հիմնատակերը, ճանապարհները, փողոցները և այլ շինությունները հնարավոր չափով պաշտպանել ողողումներից:

«Արագածոտն-10»-ի տարածքները հեղեղատար կոյուղու ստեղծման առումով որոշակի առանձնահատկություններ ունեն, քանի որ տարածքը տարբեր հատվածներում տարբեր թեքություն և տարբեր ձևեր ունի, ուստի միասնական հեղեղատար համակարգի ստեղծումն իրագործելի չէ:

16.2 Աղմուկի մակարդակի գնահատում /16,17,18/

Գյուղական համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը:

Համայնքների տարածքներով անցնում են տեղական նշանակության և միջազգային ճանապարհներ:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

Մեքենաների շարժման ինտենսիվությունը հեռանկարում չի գերազանցի ժամում 350 մեքենա:

Ձայնի էկվիվալենտ մակարդակը հաշվարկման կետում, որը հեռացված է 25 մետրով ճանապարհի երթևեկելի մասից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը, կազմում է 50 դԲԱ 45-55 դԲԱ նորմայի դեպքում (համաձայն 17, թիվ 23 գրաֆիկի):

Աղբավայրերի նախատեսման դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել <<Թափոնների կառավարում- ԵՀԳԳ Արևելք Աղբավայրերի շահագործման ուղեցույց>>-ի պահանջներով:

Հաճախակի են աղբի կուտակումը հենց բնակելի տների բակերում:

Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը:

Որոշված է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, այրել և հողով ծածկել, մինչև ամբողջ համայնքների համար աղբամշակման գործարանի նախագծումը և կառուցումը:

Նշված համայնքներում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը և տարեկան քանակը բերված է աղյուսակ 17-ում: Հեռանկարում բնակչության թիվը կկազմի 7050 մարդ:

Թափոնների ընդհանուր քանակը հեռանկարում կկազմի ~ 1410 տ/տարի:

ԿԿԹ-ի կազմը և տարեկան քանակը

ԿԿԹ	Ընդհանուր	Թափոնների ընդհանուր
-----	-----------	---------------------

	քանակից բաժնեմասը, %	քանակը, տ/տարի
Աննդային թափոններ	21.3	300,33
Թուղթ	13.3	187,53
Փայտանյութ	6.9	97,29
Պլաստմասաներ	19.4	273,54
Ռետին և կաշի	2.0	28,2
Տեքստիլ	2.8	39,48
Ապակի	5.4	76,14
Երկաթ և նրա համաձուլվածքները, Գունավոր մետաղներ	1.9	26,79
Այլ թափոններ	27.0	380,7
ԸՆԴԱՄԵՆԸ	100	1410

16.3 Արդյունաբերական թափոններ

Համայնքներում առկա արդյունաբերական բոլոր կազմակերպությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արդյունաբերական թափոնները բացակայում են:

Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են սանէպիդկայանի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային կազմակերպություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 40.85 տ/տարի:

Արդյունաբերական թափոնների կազմը բերված է աղյուսակ 18-ում:

Արդյունաբերական թափոնների կազմը և տարեկան քանակները

Աղյուսակ 18

Արդյունաբերական թափոնների բաղադրիչները	Ընդհանուր քանակը տ/տարի	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %
1. Օգտագործման ենթակա թափոններ, թեփեր	6.78	7.4
2. Սկուցքներ, կճեռներ	13.74	15
3. Շինարարական օգտագործելի թափոններ	30.23	33
4. Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական, մետաղական, օգտագործված տարաներ	40.85	44.6
ԸՆԴԱՄԵՆԸ	91.6	100

16.4 Գերեզմանոցներ

Նշված յուրաքանչյուր գյուղական համայնքում տեղակայված է 1-3 հատ գերեզմանոց: Գերեզմանոցների ընդհանուր թիվը կազմում է 9 հատ, իսկ գերեզմանոցների ընդհանուր տարածքը կազմում 29,15հա:

Գերեզմանոցները գործող են: Մեկիքայուղում գերեզմանոցի տվյալ չկա:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՄՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար:

Այն հատվածներում, որտեղ ՄՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանագատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում:

Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

16.5 Կանաչապատման համակարգը

Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (գրոսայգիներ, գրոսապուրակներ, պուրակներևայլն) ընդհամենը կազմում են ամեն համայնքում 0.1÷0.5հա: Ծինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10մ²/մարդ:

Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները՝ պուրակներն ու գրոսայգիները ներկայացված են խիստ սահմանափակ հատվածներով, քանի որ գյուղերում գրեթե բացակայում են գրոսայգիներն ու պուրակները: «Արագածոտն-10»-ի գյուղերում ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների գումարը առավելագույն չափը կկազմի 3.4հա: Մեկ բնակչին հասնող կանաչ տարածքի բաժինը կազմում է 5.6 քառ.մ/մարդ:

16.6 Շրջակա միջավայրի իրավիճակի գնահատականը համայնքների զարգացման ծրագրի իրականացումից հետո

Միջավայրի համալիր անտրոպոգեն տեխնածին բեռնվածությունը բաղկացած է գործոնային ցուցանիշներից-միջավայրի հիմնական գործոնների քանակական բնութագրից, որոնք որոշիչ են մարդու օրգանիզմի վրա իրական բեռնվածությունում՝ մթնոլորտային օդի և հողերի, աղմուկի մակարդակների, ջրի քիմիական և կենսաբանական աղտոտվածության ցուցանիշներ:

Որոշվող համալիր բեռնվածությունը օրգանիզմի վրա (KH) բաղկացած է հաշվի առնվող նշված գործոնների (տվյալ պայմաններում գոյություն ունեցող) գումարից:

Հաշվի առնվող նշված գործոններից յուրաքանչյուրը քանակապես որոշվում է հիգիենիկ նորմատիվներին վերաբերվող մեկ ցուցանիշով:

Նշված դեպքում թույլատրելի համարվում է այն մեծությունը, որը հավասար է 1-ի:

Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարա-հիգիենիկ իրավիճակի անալիզը Արտաշատ քաղաքային համայնքում աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքը (բն. թիվը 10-50 հազ. մարդ) և գյուղական համայնքների տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ3),

վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի տվյալների (ըստ բնակչության քանակի<10 հազ. մարդ) և բերված են աղյուսակ 19-ում /19/:

Աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները

Աղյուսակ 19

Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՍԹԿ, մգ/մ3	Ֆոնային կոնցենտրացիաները	
		մգ/մ3	միավորՍԹԿ
002 Փռշի	0.5	0.3	0.6
701 Ծծմբի երկ օքսիդ	0.5	0.05	0.1
200 Ազոտի օքսիդներ	0.2	0.015	0.075
322 Ածխածնի օքսիդ	5.0	0.8	0.16

Ինչպես երևում է աղյուսակից հեռանկարում նույնպես գյուղական համայնքներում ֆոնային կոնցենտրացիաները չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

Աղտոտվածության համալիր ցուցանիշը հաշվարկվում է համաձայն /22,23/

$$P = \sqrt{\sum_{i=1}^n K \cdot i^2}$$

բանաձևով, որտեղ

K – նյութի նորմավորված III դասի բերման գործակիցն է

i - փաստացի խտությունների գերազանցումն էՍԹԿ-ն :

Աղտոտվածության համալիր ցուցանիշի հաշվարկման համար ելակետային տվյալները բերված են աղյուսակ 20-ում:

Աղտոտող նյութի անվանումը	Վտանգավորության դասը	Միջին օրական կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ3	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, ՍԹԿմիջ. օր, մգ/մ3	Գերազանցում է միջին օրական կոնցենտրացիան	Վտանգավորության III դասի բերման գործակիցը՝ իզոէֆեկտիվության գործակից, K
Փռշի	III	0.12	0.15	0.8	1
Ծծմբի երկօքսիդ	III	0.02	0.05	0.4	1
Ազոտի օքսիդներ	II	0.006	0.04	0.15	1.3
Ածխածնի օքսիդ	IV	0.32	3	0.107	0.87

Օդի աղտոտվածության համալիր ցուցանիշը՝ P-ն կլինի.

$$P = \sqrt{(1 \bullet 0.8)^2 + (1 \bullet 0.4)^2 + (1.3 \bullet 0.15)^2 + (0.87 \bullet 0.107)^2} = 0.92 .$$

Ստացված տվյալներից ելնելով, երբ n=4 և p=0.92 մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը գնահատվում է թույլ աղտոտված:

Օդային միջավայրի աղտոտվածության համալիր գնահատականը տրված է ըստ հողմագծի աղտոտման աղբյուրից դեպի բնակելի գոտին փչող քամու արագության միջին տարեկան կրկնելիության (%) պայմաններում (P):

Մի հողմագծի քամիների ուղղության կրկնելիության տոկոսը քամիների շրջանային փնջագրի դեպքում՝ P_0

$$P_0 = 100 : 8 = 12,5\%$$

Քամու արագության միջին տարեկան կրկնելիությունը (գերակայում են հարավ-արևմտյան ուղղությամբ փչող քամիները) կազմում է 38 %:

Օդային միջավայրի աղտոտվածության գնահատականը տրված է համաձայն /20,21/:

$$K_{\text{մթն}} = \left(\frac{C_1}{N_1 \cdot \text{ՍԹԿ}_{C_1}} + \frac{C_2}{N_2 \cdot \text{ՍԹԿ}_{C_2}} + \dots + \frac{C_n}{N_n \cdot \text{ՍԹԿ}_{C_n}} \right) \cdot t, \text{ որտեղ}$$

$C_1, 2 \dots n$ - աղտոտվածության առանձին կոմպոնենտների միջին օրական կոնցենտրացիան է մգ/մ³,

N_1 – գործակից, որի մեծությունը կախված է աղտոտող նյութերի վտանգավորության դասից՝

I դաս – 1, II դաս – 1.5, III դաս – 2, IV դաս – 4

t – $C_1, C_2 \dots C_n$ - աղտոտող նյութերի գումարային ազդեցության ցուցադրանքն է:

$$t = P/P_0$$

$$t = 27 : 12.5 = 2.16$$

$\text{ՍԹԿ}_{C_1}, C_n$ - առանձին կոմպոնենտների միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է:

Համայնքների համար ստացվել են հետևյալ արդյունքները:

$$K_{\text{մթն}} = \left(\frac{0.12}{0.15} + \frac{0.02}{2 \cdot 0.05} + \frac{0.006}{1.5 \cdot 0.04} + \frac{0.32}{4 \cdot 3} \right) \cdot 2.16 = 2.43$$

Հաշվարկից հետևում է, որ տարվա 27% ժամանակահատվածում՝ 98 օր քաղաքային համայնքներում նկատվում է մթնոլորտային օդի աղտոտվածության բարձրացում: (0.92-ից դառնալով 2.43): Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը մնում է թույլ աղտոտված (առաջին դասի վտանգավորության նյութերի բացակայության պարագայում):

16.7 Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը

Մթնոլորտային օդի աղտոտվածության հետ կապված բնակչության առողջության պայմանական ռիսկը որոշվում է՝

$$R = V \cdot K \cdot M \cdot B \cdot C \cdot 10^{-3} \text{ բանաձևով, որտեղ}$$

R – ռիսկի չափը

V – մեկ մարդու կողմից ներծծված օդի քանակն է օրվա ընթացքում – 28.8մ³:

M – մարդու զանգվածն է կգ -70

K – մարդու օրգանիզմով տվյալ նյութի կլանման գործակիցն է (0,75±0,25)

B – ռիսկի կոնցենտրացիայի շեղման գործակից – $1,0 \cdot 10^{-3}$ (օր/մգ տվյալ նյութի համար)

C – տվյալ աղտոտող նյութի միջին տարեկան կոնցենտրացիան է օդում

$$R_{NO_2} = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.0015 \cdot 10^{-3} = 0.0023 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

$$R_{SO_2} = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.005 \cdot 10^{-3} = 0.00756 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

$$RCO = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.08 \cdot 10^{-3} = 0.12 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

$$R_{\text{փոշի}} = 28.8 \cdot 0.75 \cdot 70 \cdot 0.03 \cdot 10^{-3} = 0.045 \quad - \text{մինիմալ ռիսկ}$$

Այստեղից արվում է եզրակացություն, որ մթնոլորտ արտանետումների նվազեցման համար լրացուցիչ միջոցառումներ կիրառելու անհրաժեշտություն չկա:

16.8 Գյուղական համայնքների հողերի աղտոտվածության մակարդակի գնահատումը

Ծրագրով նախատեսված նոր արդյունաբերական կազմակերպությունների և հասարակական շինությունների կառուցումը և գործարկումը չեն հանգեցնի հողի դեգրադացման և աղտոտման: Հեռանկարում համայնքների հողերի աղտոտվածության մակարդակը կգնահատվի՝ $K_{\text{հող}}=1$ (հողն աղտոտող բաղադրիչների կոնցենտրացիաները չեն գերազանցում սահմանային-թույլատրելի նորմերը):

Շրջակա միջավայրի վրա անտրոպատեխնածին բեռնվածության համալիր ցուցանիշները

Շրջակա միջավայրի վրա անտրոպատեխնածին բեռնվածության համալիր ցուցանիշը՝ KH , որոշվում է

$$KH = (K_{\text{օդ}} + K_{\text{աղմուկ}} + K_{\text{ջուր}} + K_{\text{հող}}) : N, \text{ որտեղ}$$

N – հաշվի առնվող գործոնների քանակն է $N=4$

Ցուցանիշի նորմատիվ ային մեծությունը համարվում է հաշվի առնվող գործոնային գնահատականների համապատասխան միավորների թիվը, տվյալ դեպքում՝ 4:

Էկոլոգո-հիգիենիկ իրավիճակի գնահատականը տարածքի շրջակա միջավայրի անտրոպատեխնածին աղտոտվածության հետևանքով կատարվել է հիգիենիկ դասակարգման արդյունքների հիման վրա (KH) և բերված է ստորև աղյուսակ 21-ում:

16.9 Բնակելի կառուցապատման տարածքներում էկոլոգո-հիգիենիկ իրավիճակի լարվածության աստիճանի չափանիշը

Աղյուսակ 21

Սանիտար-հիգիենիկ իրավիճակի լարվածության աստիճանը	Էկոլոգիական և անհարմարավետության աստիճանը	Հիգիենիկ ռանգավորման մեծությունը՝ KH	Շրջակա միջավայրի բնութագիրը	Մարդկանց առողջական վիճակի բնութագիրը: Բնակչության պոտենցիալ կենսագործունեության ինդեքսը (ՊԿԻ)
--	---	--	-----------------------------	---

Արտաշատ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներ: Համեմատաբար բավարար	Համեմատաբար բավարար	$KH = 2.92 - 3.3$ ցածր է հաշվի առնվող գործոնների g $0.73 - 0.83$ անգամ	Հիգիենիկ նորմատիվների գերազանցումն է շարք միջավայրերում (ջուր, աղմուկ) Յուրաքանչյուր միջավայրում ՄԹԿ-ի եզակի գերազանցում	Առողջության ընդհանուր ցուցանիշները չեն գերազանցում սովորական հետազոտված ցուցանիշները, և կախված չեն էկոլոգիական հարմարավետությունից Առողջության ցուցանիշը մինչև 1 $\eta_{\text{ԿԻ}} \leq 1$
--	---------------------	--	--	--

17.0 Մշտադիտարկումների ծրագիր

«Արագածոտն-11» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն:

Դա թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Մշտադիտարկումների արդյունքների հիման վրա իրականացված հետնախագծային վերլուծությունը թույլ կտա հետագա քաղաքաշինական հիմնադրույթային փաստաթղթերում ներառել տնտեսության զարգացման առավել իրատեսական ոլորտները, ներդրումային ծրագրերի գրավչության բարձրացմանը, այս ամենը համադրելով տարածաշրջանի բնապահպանական պահանջների, նորմերի և սահմանափակումների հետ: Չանտեսելով մարդու առողջության, բնականոն զարգացման և բնառեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները:

Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը ներկայացված է աղյուսակ 22-ում:

Մշտադիտարկումների ծրագիր

Աղյուսակ 22

Հիմնադրույթի	Մոնիթո	Գործիքները և	Բնապահպա	Հաճախական
--------------	--------	--------------	----------	-----------

Ժամանակահատված	րինգի ենթակա պարամետրերը	մեթոդները	նական միջոցառումների իրականացման ինդիկատորները	ուրյունը և ժամանակը
«Արագածոտն-10»	Բնակչության աճ	վիճակագրություն	Նորմաների գերազանցում	Տարեկան մեկ անգամ
Ներդրումային ծրագրեր	Ոլորտը և տարածքը	Ներդրվող գումարը և ոլորտը	Բնապահպանական խնդիրներ	Գործընթացի ամբողջ ընթացքում
Տրանսֆորմացիայի ենթակա հոդեր	Առաջնահերթ, կարճաժամկետ, երկարաժամկետ	Պահանջարկ և համապատասխան փաստաթղթային փաթեթ	Ըստ հիմնադրույթային փաստաթղթի պահանջների	Նախատեսված ժամանակահատվածներում
Աղբահանության համակարգի ռազմավարություն	Հող, ջուր, օդ	Նորմատիվաիրավական փաստաթղթերի համապատասխանություն	Սահմանային թույլատրելի նորմեր	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
Գործող գերեզմանոցների սան-նորմերի բարելավում	Կանաչապատ գոտու հիմնում ամբողջ եզրագծով	Գործող մեթոդա-կարգեր և տարածաշրջանին բնորոշ բուսատեսակներ	Կաշտակա նության մակարդակը՝ %-ով	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
Ենթակառուցվածքների զարգացում	Հզորությունները	Ներդրվող գումարը և ոլորտը	Բնապահպանական խնդիրներ	Գործընթացի ամբողջ ընթացքում
Անտառներ և կանաչապատ տարածքներ	Տարածքի չափերը և խնամքը	Ծրագրային ներդրումներ, իրականացվող միջոցառումներ	Բնապահպանական խնդիրներ, կաշտակա նության մակարդակը՝ %-ով	Գործընթացի ամբողջ ընթացքում

Եզրակացություն

Կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ «Արագածոտն-10» զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում;
- բնակավայրերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում;
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում;
- արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում;
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում;
- Համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում;
- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում;
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում);

- հողի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ /Էրոզացումից, դեգրադացիայից և այլնից պաշտպանելու նպատակով/ անտառատնկումների միջոցով,

- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի նախատեսում, աղբամշակման գործարանի կառուցում;

- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում;

- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ;

- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը;

- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ;

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական կազմակերպությունների շահագործմամբ, անասնապահության հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում: Բայց տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմայի սահմաններում:

Հարկ ենք համարում փաստել նաև այն հանգամանքը, որ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման /մոնիթորինգի/ և հետնախագծային վերլուծության արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության ՌԷԳ հաշվետվությունը կարող է կրել մոտավոր բնույթ, կամ չհամապատասխանել: Դա պայմանավորված կլինի այն հանգամանքով, թե որքանով կյանքի կկոչվեն հիմնադրությամբ փաստաթղթում ներառված նախատեսվող գործունեությունները:

Հայաստանում գործում է առավել քան 450 աղբավայր: Աղբավայրերը քարտեզագրված չեն, նրանց սահմանները հստակ չեն, աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալներն ու բաղադրությունը հայտնի չեն: Աղբավայրերի մեծ մասում որևէ կառավարում չի իրականացվում, կամ իրականացվում է խիստ սահմանափակ ծավալով կամ ոչ բավարար որակով: Արդյունքում՝ ստեղծվել է մարդու և բնության համար անբարենապաստ միջավայր: ... 2016 հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության 896 համայնքներից 489 համայնքներ (54.6%) են իրենց բյուջեներում աղբահանության գումար նախատեսել: Սակայն, հաշվի առնելով, որ աղբահանությունը, հիմնականում, իրականացվում է Հայաստանի Հանրապետության մեծ համայնքներում, աղբահանության ծառայություններից օգտվում է ՀՀ ընդհանուր բնակչության 89 տոկոսը: Այս առումով, ամենաբարձր վիճակը Երևան քաղաքում է՝ 100%, ՀՀ Շիրակի (92.2%), Կոտայքի (87.5%) և Արարատի (87.4%) մարզերում: Աղբահանության ամենացածր տոկոսն ՀՀ Արագածոտնի մարզում է՝ 65%: ... 2015 թվականին աղբահանության, սանիտարական մաքրման և աղբավայրերի շահագործման համար Հայաստանի Հանրապետությունում բյուջետավորվել է 8,8 միլիարդ դրամ...»: Այս մասին նշված է ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարության մեջ, որը գործադիրը հավանության արժանացրեց սույն թվականի

դեկտեմբերի

8-ին:

Ռազմավարության նպատակն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ստեղծել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող,

ինտեգրված համակարգ (ԿԿԹԿ), որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին:

Մինչև 2036թ-ը Ռազմավարության իրականացման արդյունքում՝

- ՀՀ ամբողջ տարածքը կապասարկի ԵՄ չափանիշներին բավարարող ԿԿԹԿ համակարգ, որը կներառի աղբահանությունը և աղբավայրերի շահագործումը:
- ԿԿԹԿ համակարգը բաղկացած կլինի ոչ ավելի քան 10 տարածաշրջանային ենթահամակարգերից և կապասարկի Հայաստանի Հանրապետության տարածքի 100%:
- Կաավաքվի Հայաստանի Հանրապետությունում գոյացող աղբի առնվազն 95%:
- Բաժանորդները կտեսակավորեն իրենց կողմից առաջացված (գեներացրած) աղբի մինչև 20%:
- Նոր համակարգի ներդրմանը գուզրնթաց կփակվեն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող աղբավայրերը (եթե դրանց արդիականացումը դիտվի ոչ նպատակահարմար):
- Մասշտաբի էֆեկտի շնորհիվ, կապահովվի աղբահանության հնարավոր նվազագույն դրույքաչափը:
- Էապես կնվազի մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը: Ռազմավարության իրականացումը պահանջում է առնվազն 90 միլիոն եվրո:

Օգտագործված գրականության ցանկ

Руководство по составлению раздела «Охрана природы и улучшение окружающей среды градостроительными средствами» в проектах планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов. М., 1982г.

Рекомендации по охране окружающей среды в районной планировке. М 1986г.

Строительная климотология. Ереван, 1996г.

Рекомендзции по учету природно-климатических факторов в планировке и застройке городов и групповех систем населенных мест, М. ЦХИИП, Градостроительство, 1980г.

Руководство по разработке раздела "Охрана окружающей среды" к проекту планировки (реконструкции) жилого районас. М. Москомархитектуры, 1997 г.

Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրք, 2012թ.

Հայաստանի Հանրապետության ատլաս, 2009թ.

Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք, 2012թ.

Предложения по разработке отраслевой классификации источников выбросоа вредных веществ в атмосфере. Гидрометеиздат, 1982г.

Сборник законодательных нормативных и методичецких документов для экспертизы воздухоохраных мероприятий, Л., Гидрометеиздат. 1986г.

Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными проиводствами. Л., Гидрометеиздат, 1986г.

Методические указания по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ автомобильным траспостом. М., Гидрометеиздат, 1983г.

ՀՀ կառավարության որոշում՝ 25 հունվարի 2005 թվականի N-91-Ն. Տնտեսական գործնեության հետևանքով առաջացած աղբեցության գնահատման կարգը հաստատելու մասին:

Методические рекомендации обработки данных, характеризующих санитарное состояние водных объектов, с целью определения гигиенической эффективности водоохранных мероприятий, М. Минздрав РСФСР, 1983г.

Оценка гигиенической эффективности водоохранных мероприятий, М. Минздрав РСФСР, 1989г.

СНиП II-12-77. Защита от шума. М., 1978г.

Г.Л.Осипов и др. «Градостроительные меры борьбы с шумом», Стройиздат 1975г.

ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից»

ՀՀ բնապահպանության նախարարություն. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն»: Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված շատ բնակավայրերի ազդաբնակչության:

Методические рекомендации. Унифицированные методы сбора данных, анализа и оценки заболеваемости населения с учетом комплексного действия факторов окружающей среды. Госкомитетсан.-эпиднадзора, РФ. Москва. 1996 г.

Методические указания по санитарному надзору в районной планировке. М. Минздрав СССР. 1990 г.